

# ՑԵՑԵՐ

Վ. է. Պ.

ՊԵՐԱ ՊՌՈՇԵԱՆՑԻ

(Հարունակութիւն 1)

ԽԱ.

ՄԻԿԻՏԱՆ ՍԱԳՕՑԻ ԵՐԿՈՒՐԵԱԿԸ.

Նոյեմբերի մառախլապատ և ցուրտ երեկոներից մէկն է. աղքատ ու հարուստ կուչ են եկել իրանց տներումը. չքաւորները վաղուց իւրեանց ունեցած չուլ ու փալասի տակն են հաւաքել կիսամեր կ երեխաներին, իսկ իրանք՝ մարդ ու կին կողքերից աջ ու ձախ պառկած՝ իւրեանց մարմնի բնական տաքութեամբն ու արտաշնչութեամբը մի փոքր ջերմութիւն են աւելացնում անմեղ արարածների մէջ, մինչեւ որ քունը նրանց աչքերը փակում է. իսկ հարուստները կերել են Աստուծոյ տուած ընթրիքը և քուրսու շրջակացքում՝ տաք թռնրի բոլորքը՝ հաստ ու փափուկ անկողինների մէջ հանգտանում:

Միայն Սամփսոնն էր, որ տեղը մտած՝ սուտ խոմիացնում էր և երբ հօր ու մօր քչփշոցն իսպառ դադարեց, հազար շորերն ու ծածուկ իւր ծանօթ պատը բարձրացաւ:

Ի՞նչ է այս. Սամփսոնի աչքերը սեացան. նա սարսափեց, մնաց կանգնած Բարսեղենց պատշճամբի վերայ և չէր կտտահանում մօ-

1) Տե՛ս «Մուլք»-ի 1, 2, 3 և 4 համարները:

տենալ նուիրական պատուհանին ու որոշեալ նշանը տալ. նա մկսեց աչքերը տրորել՝ ճիշդ քնից նոր զարթածի նման, որի աչքերը առաւտեան արեգակի ճառագայթներից ինքնարերաբար ծածկուում են և շփուելով միայն փոքր առ փոքր ընտելանում են լուսին:

—Երաղում հօ չե՞մ, մոածեց Սամիսոնը և նորից աչքերը ճմուեց:

—Ի՞նչ երազ, ճրագէ՛ որ կայ, ինքն իրեն պատասխանեց նա մտքումն ու ամենայն զգուշութեամբ անցաւ Բարսեղենց կանացի սենեակը, մօտեցաւ մեծ լուսամտին ու աղօտ ապակուց ներս նայեց:

Սամիսոնը յանկարծ թափահարուեց, ամբողջ մարմնի մէջ ցընցումն անցկացաւ և ծնկները ծալուեցին. նա չոքեց լուսամտի առաջին և սուր աչքերով դիտում էր տան ներսը:

Անտեղի չէր Սամիսոնի երկիւղը: Բարսեղենց տանը հիւրեր կային, այնպիսի վտանգաւոր մարդիկ՝ որոնց դէմ ինքը պէտք է ընկճուէր, կամ նրանց կործաննէր: Եւ նա դաշոնը հանեց. երկու քայլ՝ և սենեակի ներսն արիւնհեղութիւն էր կատարուելու. բայց նա այդ չ'արաւ, խելօքութիւն համարեց սպասել:

Այժմ նա նստեց լուսամտի տակին:

Նորա բաղդից պատուհանի մի աչքը կոտրուած էր, թուղթն էր բռնել ապակու տեղը. դաշոնի ծայրով զգուշութեամբ խազեց թուղթը: Մի փոքրիկ ծակ բաւական էր ականջը դէմ տալու և ներսի խօսակցութիւնը լսելու. նա թղթի խազածը մատով լայնացրեց ու ականջը դէմ տուեց:

Այժմ գործում են նորա տեսանելիքն ու լսելիքը. ներսի գործողութիւնները բոլորը կատարուում են նորա ներկայութեամբ:

Հիւրերից մէկը յետ բաց արաւ իւր լայնաքղանց վերնահագուստը, ձեռքը գրպանը տարաւ, հանեց մի թղթի փաթեթ և պարզեց քուրսու վերաց: Մի բաղդադի մետաքսեայ թաշկինակի ծալքից փայլին տուեց ոսկեայ մանեակը, իսկ տակից դուրս եկած մատանու կարմիր յակնթեայ գոհարի շողողիւնը ծակեց ուղղակի մեր դժբաղդ երիտասարդի սիրտն ու աչքերը:

—Ահա՛, էս մեր նշանը, Բարսե՛ղ, կամ վե՛ր կալ, ասա՛ Ասուած շնհաւոր անի, կամ տուր գլխներովս ու մեզ երեսի վրայ յետ

դարձրու, ոսկի շարքը ձեռքին բարձրացրած՝ շղշկացրեց երկարա-  
հանդերձը:

—Այ ձեզ մատաղ, ախար էդ ո՞նց կըլնի, բաս հայքը իստո-  
նէութիւն չըկա՞յ, բաս Հախ միայն Տէրը (Ասպուտն) կրակ չի շաղ  
տալ մեր գլխի՞ն, ախար մէջ տեղն արիւն կայ, չհաս ա:

—Քո ի՞նչ բանն է, Բարսե՛ղ, ընդհատեց խօսողին հոգևորակա-  
նը, օրէնք դնող-քանդողը մենք ենք, հասցնողն էլ՝ վանքցիք, ես  
ասում եմ՝ չհաս չի, նրանք էլ հրամայում են:

—Ախար, տէրտէր ջա՞ն, կամ դու ո՞նց կասես, կամ նրանք  
ի՞նչպէս իրանց հոգին կը սեւացնեն:

—Մեր աղի քեա՛լլէն (Գագառն) ողջ կենաց, վանքցոնց կը հրա-  
մացի, ձեռաց պսակի հրամանը կ'առնի, պարծեցաւ միւս խօ-  
սակիցը:

Կարծեմ հիմա հասկանալի է թանկադին հիւրերի ո՛վ լինիլը.  
առաջինը 0. գիւղի աւագ երէցն էր՝ մեզ յայտնի տէր-Սութիասը,  
միւսը՝ ինքը տանուտէր Խուդօն:

Տանուտէրի կապերը Բալասան աղայի հետ մեզ քաջ ծանօթ  
են, բաւական է իմանալ, որ աէրտէրի աւագ քահանայութիւնը,  
խառայ փիլոնը և թաւշեայ կամիլաւկան Մելնիկովի միջնորդութեանց  
արդիւնքն էր, և ահա մենք կը տեսնենք, որ Վաղիմիր Նեստորիչը  
մի ձեռքով բռնած ունի 0. գիւղի հոգևորական և աշխարհական  
իշխանութեանց ներկայացուցիչներին՝ կարեր ժամանակն իւր օդ-  
տին պէտք ածելու համար: Սակայն խոստովանուում էր Բալասան  
աղէն, որ յաճախակի տէրտէրի հմտութեանց դէմ ինքը տեղի է  
տալիս:

—Հիմի հասկացա՞ր, Բարսե՛ղ, որդեա՛կս, թէ աղջիկդ սրա տղին  
տալով՝ ի՞նչպէս մարդի շուաքի տակն ես մտնում. ուրիշները փող  
կը մսխէին ու էսպէս չհաս չէին կարող գլուխ բերել, իսկ հիմի  
ոչ տանուտէրի և ոչ քո քսակից մի կոպէկ չի գնալ, Բալասան աղէն  
կամեցաւ թէ չէ, էն օրը պսակիր:

—Ախպէ՛ր, ես ոչ աղջիկ ունիմ Խուդօնի տղին տալու, ոչ կա-  
շառքներ մսխելու հոգա քաշեմ. ես մի անգամ հաստատ խօսք եմ  
տուել Գալօցի տղին, Աստուած իրան արժանի անի. էս էլ ձեզ  
ասեմ, որ դեռ նշան չենք դրել, բայց գեաղէն (պղայն) կապը կտրած

շան նման ամեն դիշեր ներս ա ընկում։ դէ՛, ղորթ ա, քչփոցից աւել բան չը կայ միջներին, համա ձեզ լայաղ չի (վայել չ) ուրիշի շունչը շնչին առած աղջկանն ուղել. մէրն երդում կրակն ա ընկնում, միայն ես չեմ հաւատում; որ մի հետ էլ ա աղունիկների պէս իրար գուրզուրած, կտուց կտցի քսած չըլնին։

—Հէր օրհնա՛ծ, հիմի ազափ տղէքը որբեկրի կնիկ են առնում՝ չեն ամաչում, քո պաշած աղջիկը տանուտէրի տղի կատիկին դէմ կառնի՞։

—Տէրտէրը շատ ուղիղ ա ասում, մեզ հաճոյ ա, հաստատեց տանուտէրը։

—Նատ էլ ձեզ հաճոյ ա, բայց իմ սրտովը չի, ես Գալօյի Սամփանից աղջիկ չեմ հանիլ։

—Կը փոշիմանես, Բարսե՛ղ, սպառնաց Խուդոն։

—Աստուած ինքը ո՛չ փոշիմանութիւն տայ, շատ անէք՝ բաղերս պտի քանդիլ տաք, հնձանս պտի կրակէք, ոնց որ ինեղճ Գալօյի գլուխը բերիք, գնացէ՛ք, արէ՛ք, Գալօյի տղէն աղջկանս իմ մլքերի սիրու չի ուզում, նա տկլոր դուս կը տանի, մենք էլ շատոր չենք, մի տեսակ օրերս կը մթնացնենք, ընշանք Սամփանի ձեռի հողին կ'արժանանանք։

—Նատ ես սիրում Սամփանի՞ն, խորամանկ հարց տուեց տէր-Սուքիասը։

—Աչքիս լսի պէս։

—Նա էլ քո աղջկանը չի՛ կարող առնել։

—Ոչ ովից։

—Դու չես պսակիլ, գործակալին իրան կը կանչեմ։

—Տեսնե՞նք։

—Բա՛ս, աջիդ մեռնի՛մ, վեր կացէք, ոնց որ եկել էք՝ գնացէ՛ք, հաւաքեցէք ձեր բերած նշաններն ու ուրիշի դրնովը ներս մտէք. ես իմ փեսէն ունիմ, Սամփանի կտրած դունկը հազար տղի հետ չեմ փոխիլ։

—Վեր կաց գնա՛նք, տանուտէ՛ր, ասաց տէրտէրը, պարզ երեւում է, որ սա էլ բանի մէջ խառն է, ապա թէ ոչ՝ մարդասպանին, արենկերին ո՞վ է գժուել աղջիկ տայ։

— Ի՞նչ ես ասում, տէրտէ՛ր:

— Հանի՛, տանուտէ՛ր,

Տանուտէրը ծոցիցը հանեց մի թերթ քառածալ թուղթ:

— Եղ ի՞նչ թուղթ ա, շփոթուած հարցրեց Բարսեղը:

— Ա՛ռ կարդա՛ ու իմացիր, առաջարկեց տէրտէրը:

— Ես որ կարդալ իմանայի՝ օրինաւոր մարդ կը լինէի:

— Ուրեմն լիի՛ր:

Քահանան սկսեց բարձրաձայն կարդալ. — Մենք մեր աչքովը տեսանք, որ Ասօ Դօնդարովի սպանողը Սամիսոն Գալուստովն էր և ոչ թէ Հայրապետ Դվակոթովլը: Հայրապետն այդ օրը զիւղումը չէր, նա բարձակ էր տարել Երևան ծախելու: Մենք մեր ասածն երդումով կը հաստատենք:

— Եղ գիր տուղներն ո՞վ են, գունատուած հարցրեց Բարսեղը:

— Ով իր աչքովը տեսել ա ու էստեղ ձեռք քաշել, գլաւնու փէչատովն էլ զաւէրնի արել (տանուտէրախոն խնդով վատէրցնել), պարծեցաւ Խուզօն. տեսնում ես, յիսուն հոգուց աւել են. Էն օրը դատարանումն ինձ խեղդում էին, ես Սամիսոնին խեղճ էի դալիս, չի ուզում հաստատեմ, նրանք դատարանը զիւներն էին առել, քիչ էր մնացել՝ խեղճ գրագրին ոտնատակ էին տալիս, որ զաւէրն ին մի քիչ յետացրեց. թէ չես հաստատիլ, ասում էին՝ մենք կը տանենք նաչալնիկի իրան փէշատը դնիլ կը տանք, քեզ վրաց էլ զանգատ կանենք, թէ Գալօյից կաշառք ա կերել: Նս էլ վախեցալ ու ձեռք դրի:

— Այ ձեր տունը մահ մտնի՛, վիզը թեքեց Բարսեղը, դուք ո՞նց էք անմեղ մարդի արիւնն ընկնում, խեղճ Գալօյի տունը քանդում, հերիք չէր տունը կրակեցիք, տասը տարէն տնկած բաղն էք յետ խրում, հիմի էլ աչքի սե ու ապիտակը մի տղէն ա, ուզում էք նրա վային նատիլ ձեր չար մաքերի համա՞ր: Տէրտէ՛ր, քո անտօնական կարգին կապուած ըլնե՛մ, թէ սուտ ասեմ, էն գիշերն աքլորն երեք բերան կանչել էր, որ Սամիսոնն աղջկանս հետ մեր գեազմումը (պատշգամք) փափսում էին:

— Եղ ա, որ Աստուած էլ զիսին բարկացաւ, աչքը հանեց է. նա ի՞նչ իրաւոնքով գեռ նշան չը տուած՝ ուրիշի աղջկալ անունը

կոտրում էր. աղջիկը որ կայ, անկտրիլ ձմերուկ ա, ձեռք տալ չի ընիլ, նեղացած ընդհատեց տանուտէրը:

—Ախպէ՛ր, նշանս ո՞րն ա, մէջը չհասութիւն չը կայ, երե- խէքն իրար սիրել են, մի օր էլ պասկուելու են. իր ապրանքն ա, թող էնքան գզզուին, որ բեզարեն:

—Դէ թող ըատուց յետոց գզզուին, սպառնաց տանուտէրը. քանի օր ա՝ էս թուղթը ծոցումն պահում եմ, լապօրտ (յայտա- քարութիւն) չեմ դրում նաշալնիկին, Սամփսոնին խեղճ եմ գալիս, բաց որ բանն էստեղը հասաւ, ի՞նչ ես խորհուրդ տալիս, ուկր- տէ՛ր:

—Ի՞նչ պէտք է խորհուրդ տամ, ինչ որ անցեալ օրը Բալասան աղէն քեզ հրամայեց, պարտական ես անել:

—Քեզ հաւատացնում եմ, Բարսեղ, ասաց Խուդօն, մեր աղէն Սամփսոնի համար շատ ցաւեց, բաց վերջը խորհուրդ տուեց, որ բանի եղելութիւնը քեզ գլխի քցեմ, նշանը վերցնեմ, գամ քեզ մօտ, էս թուղթն էլ ցոյց տամ. թէ նշանս վերկալնես, մի հնար- քով Սամփսոնին ազատենք, թէ չէ՝ օրն էգուց կոնկրը կապեմ քա- մակիցը, երկու զարաւուլի (պահապահն) առաջն անեմ, զրկեմ նաշալ- նիկին:

—Դու էլ կանես էլի՛:

—Լիսը դեռ չը բացուա՛ծ:

—Էլ լուսանալուն լնչի՞ ես սպասում, առաջարկեց տէրտէրը, քո տեղակ լինեմ՝ այս րոպէիս բռնել կը տամ, չե՞ս տեսնում, մեր պարոն Բարսեղը ձեռաց կը փախցնի: Եւ քահանան վեր կենալ ձեռ- ցրեց:

Յանկարծ միւս սենեկի դուռը բացուեց և Բարսեղի կնոջ գլուխն երևեցաւ:

Նա ձեռքով նշանացի ինդրեց տէրտէրից նատել, իսկ ամուս- նոյն ներս կանչեց:

—Գնա՛, գնա՛, տես խնամի Մարգարիտն ի՞նչ ա ասում, դար- ձաւ քահանան դէպի Բարսեղը, դա տասը քեզ շափ խելք ունի, դրա խօսքին լսի՛ր, մենք կը սպասենք:

—Տունդ քանդուի՛, դուռդ շարուի՛, ա՛յ մարդ, մենք կորած ենք, էստեղ արնքի (արեան) բանատեղ ա դառնում. գնա՛ մի տես դրսեն

ի՞նչ կայ. լա՛ւ՝ որ թխսոցի ձեն լսեցի, դուս էլայ աչքովս տեսայ ու եկայ էն ճարը կտրածի աղջկանը զլիեցի:

Կնոջ կցկտուր խօսքերից բարսեղը ոչինչ չը հասկացած՝ կամեցաւ անձամբ հասու լինել պատշգամբի վերայ կատարուած եղելութեանը. բայց էլ կարիք չը մնաց գնալու, ահա՛ Սօնան բաց դաշոցնը մի ձեռքին, միւսով ներս է քարշում սարի պէս տղամարդին—Սամփսոնին:

Նա Սամփսոն չէր, երկու տարեկան թոթովախօս երեխաց էր, որի ձեռքը բռնած՝ կարող ես ցանկացած աեղդ քարշ տալ. մանուկը ոչ ոյժ ունի քեզ դիմադրելու և ոչ լեզու իւր տհաճութիւնն արտայացնելու. Նա միայն լացով է հասկացնում իւր կամքը. մեր Սամփսոնը, ներկայ րոպէին, այդ միակ յատկութիւնից էլ զուրկ էր, ոչինչ դիմադրութիւն, ոչինչ լաց կամ խօսք. և ի՞նչ էր զգում խեղճը, որ սրտի ցաւ յացնել կարողանար. Սամփսոնը մի անքան, տնային անսասունի, քան բանականի էր նման, քթի ծակերից պարբերաբար դուրս փչած շնչի տուրեառութեան հեծկտանքն էին միայն կեանքի նշովներ տալիս:

—Էս ի՞նչ ա, ուզում էր ձայն արձակել բարսեղը. բայց Սօնան ընդհատեց. Նա ձեռքը բարձրացնելով՝ հասկացրեց հօրը լոել, իսկ ինքն իւր քարշ տուած էակին, կամ աւելի յարմար ասենք, առարկային նստացրեց մի անկիւնում:

—Ձէն ու ձուն չը հանե՛ս, տեղիցդ չը շարժուի՛ս, թէ չէ ասած ձեռաց կը կատարեմ, հրամայեց աղջեկը՝ իբրև մի մայր, որ պատուիրում է երեխային լոել, ապա թէ ոչ՝ հայրիկին կ'ասի, նըրան սիւնիցը կը կապի, մինչև երեկոյ քաղցած կը պահի:

—Ափու ջա՞ն (հայրեն), չոքեց Սօնան հօր առաջին, ոտիդ տակին մատա՛ղ, գնա՛ էդ մարդկանցը խօսք տուր, բէլգեահը (նշան) վեր կալ:

Սամփսոնն իրան թափ տուեց. մինչև այդ րոպէն նորա բաց աչքերն ու բերանը ոչ մի կենդանութեան արտայալութիւն չէին երեսեցնում; մի ապուշ էր, մի անշունչ արձան էր, որի հայեացքն իւր հրամայողի երեսից չէր հեռանում; իսկ այժմ նորա գլուխը բարձրացաւ, դիրքն ուղղութիւն ստացաւ, բերանը փակուեց ու աչքերի մէջ բարկութեան ու կատաղութեան կայծեր ցայտեցին:

— Զ՛ԵԼՆԻ՛Մ, Հ՛ԻՄԱՆԱ՛Մ՝ ձէն ու ծպտուն հանես, խանչալը Սամփսոնի վերայ շարժեց Սօնան, թէ չէ ըհը՛... և նա ծռեց դաշոնի սուր ծայրը դէպի իւր կուրծքը:

Երկուս երեխայի վերայ ազդեցին մօր սպառնալիքը և նա հանդարտուեց:

— Եպիէ՛ս, սուս կա՛ց. դու իմ արածներս յետոյ կը հասկանաս, ժամ մի՛ գալ, տեղդ ծանր նստի՛ր, կրկնեց աղջիկն իւր պատուէրը Սամփսոնին ու դարձաւ դէպի հայրը:

— Գնա՛, ափո՛ւ, ասա՛ էդ մարդկանցը, որ իմ աղջիկն իր յօժար կամքովը Խուդոյի հարսն ա դառնում, բայց նա երկու խնդիրք ունի ձեզանից. առաջինը՝ որ էստեղ ևեթ Սամփսոնի թուղթը ճղէք, նրան չը դիպէք, մէկէլը՝ որ մի շաբաթ խոստովանք պահէք, գեղը շաւ չ'անէք (չը հռչակել): Ասա՛, թէ որ մի անլիզու երեխի բերանից էլ էս խաբարը դուս ա եկել, թէ ձեր բէլգեահը մեր տանն ա, իմ ոտը ձեր շէմքովն անց չի կենալ, ժամիցը՝ սեղանի տակիցը յետ կը դառնամ ու չեմ պսակուիլ:

Սուր էր այդ րոպէին Սօնայի ձայնը. նորա ամեն՝ մի խօսքը լսողի անձը սարսափեցնում էր, ճրագի տակին նորա կերպարանքը վըսեմ և սքանչելի էր, դողդոջիւն ձայնը խիստ ազդու էր:

— Ասա՛ շարունակեց գոեհիկ գիւղականի ամաշկու աղջիկը, որ բաղդադի աղլուկն ու մատանիքը թողան էստեղ, ոսկիքը յետ տանեն:

— Դէ՛, էն գինու գաւը տո՛ւր, ա՛յ կնիկ, անդիտակցաբար ասաց Բարսեղը Մարգարտին, տանեմ մի մին թաս աչքալիսէք լակացնեմ (ի՞նչցնել) ու ճամփու քցեմ:

— Մի կաթիլ էլ չի՛ կարելի, վերցրած գաւը մօր ճեռքիցը խլեց Սօնան, ասա՛ աղջկանս կամքն ա, որ էս իրիկուն նշանը թողալուց աւելի ձեր բերանը ոչինչ չը պտի մտնի:

— Ախար էդ ի՞նչպէս կընի, ա՛յ աղջիկ, բա՛ս նշան կը տան ու աչքալիս չեն խմի՞լ:

— Այ էսպէս, ասաց Սօնան և դաշոյնը ճեռքին շտապեց բաց անել միջին դուռը և ուզում էր դուրս ընկնիլ միւս սենեակը:

— Կա՛ց, ճար կորածի աղջի՛կ, յառաջ ընկաւ մայրն և արգելեց: Գնա՛, տնաքանդի մա՛րդ, գնա՛ ասա, էլ ի՞նչ ես ուշացնում:

Սարգարիտը դուռը կիսաբաց արաւ և մարդին դուրս հրեց  
Հիւրերի մօտ:

—Միծն ուտե՛մ խելօք բալուկի, դու էլ գնա՛, դռան-  
քը մի քիչ ծերպ արա (դուռը կիսաբաց արա), թող մեր տանուտէրի  
հարսնացոն իր բարի աչքովը տեսնի, որ տէրտէրն իր ազիզ խա-  
թեր համար հարիւր կտոր է անում նրա առաջուայ նշանաձին  
գործի տակ քցող թուղթը, ասա՞ քանի ես կենօք կենդանի եմ,  
ոչ ով չի կարող Սամփանի մազին դիպչել:

Տէրտէրն իւր խօսքը կատարեց. Բարսեղը դեռ նոր էր դուռը  
բաց արել և երեսը դէպի նոր իննամին զարձրել՝ տէր-Սուքիասը ձեռ-  
քի թուղթն արդէն մանր պատառոտել էր և ցրիւ տուել յա-  
տակին:

—Դէ՛հ, տանուտէր Խուղօ՛, վեր կա՛ց, տեղիցը կանգնելով ա-  
սաց տէրտէրը, հարսդ համ խելօք է, համ բարի. թէ քո Կարապե-  
տին բաղդաւորացրեց, Սամփանին էլ Սիրիրից ազատեց:

Հիւրերը մետաքսեայ թաշկինակն ու մատանին թողին քուրտու  
վերայ իբրև նշան և իրանք գիշեր բարի մաղթելով՝ հրաժեշտ  
տուին:

—Նէնց իմանաս, տէրտէ՛ր, միկիտան Սաքօյի հետ մի հոգի, մի  
մարմին ըլնիս, ասաց նրան փողոցումը տանուտէր Խուղօն:

—Է՞նչ միկիտան Սաքօ:

—Է՞ն՝ որի պատմութիւնը դու անցեալ շաբաթ մի գրքում կար-  
դացիր ձեր տանը:

—Դու ի՞նչ զիտես, թէ մենք երկուսս մի հօրից, մի մօրից  
չենք:

—Նանաք չեմ անում, դու միկիտան Սաքօյի խելքը բանա-  
ցրիր:

—Ի՞նչպէս:

—Ախար էն սհամթը ո՞ր տեղից միտքդ եկաւ Բարսեղին յետ  
զարձնել դուռը բաց անելու ու ինքդ վրադարին (հաղթնեղով) խկա-  
կան թուղթը ջէրդ կոխեցիր, մի ուրիշ անպէտքը հանեցիր ու պա-  
տըռտորեցիր, նրանց էլ աւատացրիր, թէ հէնց Սամփանի թուղթն  
էր՝ որ ոչնչացրիր:

—Դէ՛, փառք Աստուծոյ, քո բերանովը վկացեցիր, որ միկիտան

Սաքօյի հետ մի հոգի, մի մարմին ենք, մի հօր որդի ենք, էլ ո՞ւ  
ևս իմ խելքի վրայ զարմանում, պատասխանեց բազմակողմանի դի-  
տումներով կատարեալ միկիտան Սաքօն, քան նորա երկուորեակ տէր-  
Սուքիասր:

### ԻԲ.

ԽՕՍՔԸ ՇՈՒՏ ՎԵՐԿԵՆԱԱԼԸ ԶԻ, ԽՕՍՔՆ ԱՍՏՈՒՄՈՑ ՑԱԶՈՂՈՒԹԻՒՆՆ Է.

Շատ ժամանակ չէ, որ փոքր ինչ հեշտացել է խրամի մուտքը.  
15, 20 տարի յառաջ դեերի անցք էր ներկայացնում նա:

Ասածս 0. գիւղի միակ ճանապարհն է, որ հաղորդակցութիւն  
ունի գլխաւոր կենդրոնների հետ: Խրամ կամ Զորամուտք կոչելն  
իւր հիմնական պատճառն ունի. բնութիւնը սեղմելով մեր աշխար-  
հի անուշահամ գետակներից մէկը անդնդախոր ձորի անմատչելի  
ժայռերի մէջ, չի կամեցել իսպառ զրկել կենդանի էակներին իւր ա-  
մենաանհրաժեշտ բարիքներից մէկը վայելելուց:

Զորը, որի մէջ անսահման յակստենականութիւնից հոսում է  
կատաղի գետակը, նմանում է մի կիսագալար տարածուած վիշապ օձի,  
որի գլուխն աւելի է մեծ, քան թէ ամբողջ մարմինը, որի տուտը  
և մարմինը փոռուած է ընդարձակ դաշտի մէջ, իսկ գլուխը հասցրել  
է իւր գալարումը մինչեւ մեծանիստ լեռները, որի բերանի ճեղք-  
ուածքը թէւ համեմատօրէն ոչ այնքան լայնարձակ, բայց սուր սուր  
ժանիքը՝ ծնօտների երկու կողմից դուրս ցցուած՝ սարսափի են ներշն-  
չում տեսնողին: Ահագնատեսիլ խորդ ու բորդ քարափներն են գետակ-  
վիշապի ատամները, կապոյտ ու պարզորակ ջուրն է նորա երկայն  
և բարակ լեզուն:

Երեսունի չափ հայ գիւղօրայք շարայարուած են գետատտի  
շրջակայքում՝ սկսած ճիշդ այնտեղից, ուր չքանում են ժայռերը,  
ուր զադարում է կարկաչաձայն խողխոջումը և անյայտանում են  
փրփրադէզ ալիքները, ուր ականջ խլացնող շատախօս կաչաղակը  
պապանձուում է, հանդարտուում է քնած, մեռած յառաջ է հո-  
տում աւազի և տղմերի միջով ընդարձակ տափարակի վերայով՝ ող-  
ջոյն տալու և միախառնուելու տասնապատիկ իրանից մեծ գետին՝  
հայ աշխարհի մայր—հինաւուրց Արաքսին: Բայց մեր գետակը ըդ-

ձատոչոր է լինում՝ հէնց ժայռերի պաշտպանութիւնից զրկուած տեղումը, ինչպէս ասում են՝ նորա մուրազը փորումն է մնում, վափագին չի հասնում. քաղցած դայլերի նման յարձակումն են գործում նոյն տեղումն իւր վերայ բնակուող գիւղերը և առուներով գետակի վերջին կաթիլն էլ յափշտակում։ Մեր գետակը շատ արդիւնաբեր է, նորա ջուրը քաղցրահամէ, նորա ամեն մի կաթիլը ոսկի և արծաթ է։

Որչափ գիւրամատէլի է դառնում մեր գետակը դաշտացին տափարակի վերայ, դորա հակառակը՝ հեշտութեամբ մուտք չի տալիս իրանից օգտուելու լեռնոտ վայրերում, ուր, ինչպէս ասացինք, խոր անդղում՝ սանդարամետների կացարանից շատ մօտ է վազում։

Երկու կոփածոյ կամուրջ միայն յաջողեցրել են նախնիքը կանգնել այն գետակի վերայ. բնութիւնը յիսուն վերաստաչափ տարածութեան մէջ պատառել է ընդ ամենն երկու խրամ ձոր ամուսնութ, որպէս զի չ'ընդհատուի գետակի երկու ափունքներին ընակուղների հարեւանութիւնը։

Թէպէտ երթեւեկը չի դարարում այդ ճանապարհով, սակայն աժան չի նատում անցուորականին նորանից օգորուիլ. անիւը դարերով կոռուել է և վերջերս միայն յաջողեցրել է զլորուիլ երկու յիշեախրամներից մէկի կամրջովը. խակ միւտովը՝ դեռ ոչ մի հեծեալ, ոչ մի քաջ ձիաւոր սիրտ չի արել ձի նատած անցնելու։

Վերջինս 0. գիւղի մուտքն է, 0. գիւղի խրամն է։

Այս կողմից մտնես, հանդէպից գաս՝ միևնոյն է, խոնարհի՛ր, իշի՛ր, ձիուդ սանձը ձեռքդ ա՛ռ և զգուշութեամբ քաշելով՝ ձորը մըտիր, ձորից վեր բարձրացրիր։

Գեղեցիկ է նայել ճանապարհորդներին՝ միմեանց ետևից ձիանքը քաշելուս. ուղտի շարքի են նմանում նոքա իրար ետևից կապած, այն զանազանութեամբ, որ ուղտերի ոտնաձայնը չի լսուում, խակ այստեղ ձիանց պայտերի և քարքարուտների շարունակ կոփւը միանալով գետակի գոչգոշիւնին՝ մի խառնաձայն շաշիւն և շառաշիւն է բարձրանում. արժէ, մանաւանդ սաստիկ մութ գիշեր ժամանակը, խաղաղ եղանակին՝ նստել մեր անբաղդ Արտեմ Սէրգէյի՛ի պատրշգամբի վերայ և դիտել հեռուից կայծերի բազմութիւնը, որ օձաձե ցոլում են պայտերի և քարերի միմեանց ընդհարուելուց։

Ահա այս դժոխավին ճանապարհով 0. գիւղի խրամնվ իջան դէպի ձորն երեք հոգի և մօաեցան կամրջին:

Նոքա սառած մնացին կամրջի ականջին մխուած, երբ նկատեցին ձորի միւս երեսից խրամի նեղ անցքը մուտ գործելուս տասնի չափ ճանապարհորդների:

—Վա՛հ, բացականչեց անգիտակցօրէն երեք ուղեկիցներից մէկը:

—Ել ի՞նչ վա՛հ:

—Գնա՞նք:

—Ուղենանք էլ՝ չենք կարող գնալ, տեսնենք՝ էս փոթորիկն ո՞ւմ դիմին ա տրաքելու. չես տեսնում՝ քանի հոգով են զալի՞ս:

—Քանի նրանք մեզ չեն նկատել՝ եկէք մոնենք կամրջի կամարի տակը, թող գան անց կենան, կորչին, մեզ չը տեսնեն, ասաց երրորդը:

—Ո՞ւմ աչքիցն ես պող տալիս (շեղուկ) փախչում, տե՛ս, ի՞նչպէս է զայլի ժանիքը յետ բաց արել, փառ փառ ծիծաղում. նա, երեխ, մեր մէջ իւր որսը գտել է և պատմում է իւր առաջից եկողներին, ասաց առաջինը:

—Բա՛ս ի՞նչ անենք:

—Սպասենք, թող գան անց կենան, յետոյ կը մոտածենք:

Վերջին խորհրդածութիւնն աւելորդ էր, ուղէին կամ ոչ, պարտաւոր էին կանգ առնել մինչև դիմացի ճանապարհորդների գալ և անցնելը. ամենալայն անցքը, ուր՝ կարելի էր կանգնել և եկողին տեղ տալ՝ կամրջի երկու ականջների մօտի յետ բացուած փոքրիկ հրապարակներն էին: Այստեղ են սպասում միշտ անցուորները միմեանց ճանապարհ տալու:

Դիմացից եկող ճանապարհորդները մօտեցան:

—Բարի լո՛յս, Մելիք-Բաղա՛լ, յանդուգն ժպիտով, դիմի արհամարհական շարժումով ողջոյն տուեց նրանցից մէկը:

Բարե տուողը կարաւանի մէջ երրորդ տեղն էր բռնում. նրանից առաջ ուրիշ երկուսը բաւականացան լուսթեամբ ձեռքերը մօտեցնել պաշտօնական դիմարկի եղբին և անց կենալ. քաղաքավարութեան պահանջն էր այս: Մելիք-Բաղալն իւր երկու ընկերների հետ պատկառանքով դիմարկները հանած՝ վաղուց սպասում էր դիմացի եկաւորներին:

—Հը՛, Գալ-ափո՛ւ, քեֆդ ո՞նց ա, էս ո՞ւր բարով. ա՛յ տղա՛յ, Սիսա՛կ, դո՞ւ դէպի ուր, էս ի՞նչ խորհուրդ էք կապել, էլի մի ա-ղուն կ'ունենաք աղալու, հարցերն իրար քամակից շարեց նախկին ողջունողը՝ մեր երեք մոլորածներին:

—Ոչի՞նչ, աղա՛յ, դառն հեգնութեամբ, բայց համեստօրէն պա-տասխանեց Մելիք Բաղալը, գնում ենք մեր քեասիբութիւնին (կո-րեք հռգալու), երեխէքը տկլոր են, մի քանի գազ խամ կտաւ պտի առնենք, բընդ-մընդորենք (վառ էաբեւ), շինքները քցենք. ի՞նչ ա-ղուն պտի աղանք, աղունն աղում ա ջաղացի մեծ քարը՝ ատամ-ները սուր, ինքը հասո՛ օր ու գիշեր ծամում ա ծամում ու չի կշունում:

—Յորենի ջանն էլ է հանում, նրան ո՛վ է ասում զայ ընկնի քարի տակը, որ ճիլուի, պատասխանեց ազայ կոչուածը, և երեխ, մեծապէս գոհ իւր սուր և կծու պատասխանից՝ սկսեց կրկալ ձու-ածան հաւի պէս՝ աւելի բարձր, քան գետի կարկաչիւնը:

Քարածերպերը շատ հեռու տարան նորա ծիծաղի արձա-գանգը:

—Կարծեմ, հարկաւոր է, Վասիլ Վասիլի՛չ, հարցեց աղէն ուռ-սերէն իւր առաջից գնացող գաւառապետի օգնականին:

—Խնչպէս կամենաք, Վաղիմիր Նեստորի՛չ, պատասխանեց Վա-սիլ Վասիլիչը:

—Մահմա՛տ, էստե՞ղ ես, դարձաւ գաւառապետի օգնականը դէպի սարի արջ կոչուած քամակից եկող եասաւուլը և ցուցա-մատով մի նշան տուեց:

Եասաւուն երեխ լաւ գիտէր իւր տիրոջ նշանները. նա կանգ առաւ կամրջի ականջին, կանգնեցրեց իւր համապաշտօն երկու ու-րիշ եասաւուներին և երեք զազախներին ու ինքը մօտեցաւ Մե-լիք-Բաղալին և գլխով վերադարձ ցոյց տուեց:

—Եկէ՛ք, տղէ՛ք, ասաց Մելիքն և յետ դառան:

—Գալ-ափո՛ւ, տղիդ ե՛րբ ես պսակում, առանց յետ նայելու ձայն տուեց Բալասան աղէն. շուտ արա՛, մի հարսանիք ուտացրու, ի հարկէ, անշնորհք չես լինիլ, կը հրաւիրեաւ:

—Բարո՛վ էն օրը հասնինք՝ հեշտ է, սառը պատասխան տուեց Գալօն:

—Գնում ես գործակալի մօտ է՛լի... հա՛... հա՛... հա՛... նո-  
րից պարանոցը յետ թեքելով՝ կչկաց Մելնիկովը:

Գալօն լռեց:

—Լաւ էք միտք արել. Գալ-Ափուն պասկի հրամանը կը խընդ-  
րի, Մելիք-Բաղալը միջնորդ կ'ընկնի՝ աթոռահարկը քիչ առնելու՝  
Սիսակն էլ թղթերն ու խնդիրները կը գրի, եթէ, բան է՝ գործակա-  
լը հրաման տալու չը լինի. Էղակս բաներում Սիսակը վարժ է,  
գրիշը սուր է, օրական հարիւր խնդիր սուտ և ուղիղ կը շարադրի,  
ձեռք կը դնի, կը տայ, մէկի տունը կը շինի, միւսինը կը քանդի,  
ապրի՛ ինքը, լաւ տեղերում է իւր գիտութիւնը գործ դնում, թու-  
նալից ժպիտով շարացարեց Մելնիկովն այս խօսքերը:

—Ես ո՛չ Վանեցի եմ, ո՛չ Վանեցու խորհրդակից և ընկեր,  
կարճ կարեց Սիսակը:

—Նատ չի քաշիլ, կը տեսնենք:

Մեծ դժուարութեամբ դուրս եկան վերջին խօսքերը Բալասան  
աղայի բերանից, արիւնը գլուխը տուեց, ատամները կցուեցան բար-  
կութիւնից. վերջին բառը երկար դողդոչումնվ ու ծորումնվ ձրգ-  
ուում էր նորա ատամների կրնտումի հետ:

Լա՛ւ, որ խրամի նեղութիւնը տեղ չը տուեց Բալասան աղային  
յետ դառնալու և այդ սրտովը Սիսակի վերաց յարձակուելու, ապա  
թէ ոչ, եթէ կարողանար և Սամփսոնի էլ ոյժն ունենար, Սիսակին  
նա միջից երկու կէս կ'անէր:

Մեր Սօնացի սիրահար Սամփսոնի համար չէ խօսքս. Սուրբ  
Գրքի հերոս, առիւծի բերան ճղող, տիկին Դալիլայի ձեռքի խա-  
ղալիք Սամփսոնն եմ ասում:

Ճանապարհորդները խրամը դուրս եկան:

Զորամուտքի բերանին ամենքը ձի հեծան:

Թանկագին հիւրերն իշան Բալասան աղայի տանը:

## ԻՊ.

ԲԱՐԵՐԱՐԸ.

Օ. գիւղը դղրդում է, վայնասունը տանում է, եասաւուլ,  
շազախ ընկել են փողոցներն և պատահողի վերայ մորակները ճօ-  
ճում:

Մէկից խոտ են պահանջում, միւսից՝ գինի, օղի, հաւ, ձու,  
իւղ, բրինձ և ամենայն բարիք, ընչով գրաստների հետ իրանք  
էլ կարող են բարեկենդան անել:

Տանուտէրը գզրի ձեռքով գիւղական իշխաններ է հրաւիրում  
Բալասան աղայի տունը: Կանչուեցին և Գալ-ափուն ու Մելիք-Բա-  
դալը:

Մելնիկովի դահլիճում ատեան բացուեց:

Նստած են քննիչը, Վասիլ Վասիլիչը և ինքը Վաղիմիր Նես-  
տորիչը: Սորա կողքին է և տէր-Սուրբիասը:

Գիւղի իշխանները ոտքի վրայ են:

Սպասում են:

—Սամփառնը չի երևում, ներս եկաւ և բանաւոր զեկոցումն  
արաւ տանուտէրը:

Բալասան աղէն թարգմանեց Վասիլ Վասիլիչին:

—Գետնի տակից հանեցէք, բերէք, թէ չէ գիւղը կրակ կը-  
տամ, ոտքը յատակին զարկեց Վասիլ Վասիլիչը:

—Խնչ ես կարծում, ո՞րտեղ կը լինի թագ կացած, քչիչում է  
Մելնիկովն իւր կողքին նստածի ականջին:

—Հագիս չը պէտք է լինէ՛ր այս, գետնի տակիցը դուրս քաշէի,  
դլ' լսդ վկայ:

Խօսակիցը ցոյց տուեց Բալասան աղային իւր լայն քղանցքը:

—Եթէ տեղը գիտես, Խուզոյին աչքով արա՛, թող գնայ բերի:

—Ուրեմն ընչո՞ւ է տանուտէր, եթէ այդքանն էլ գլխի չի ընկ-  
նում: Ճուկն ինքն իրան ա թօռն ընկել, դա աչքի առաջին թո-  
ղած, չօկեն (անաղոտ) է չափում: Միայն մեր Խուզոյի բանն աջ է,  
Բարսեղն էլ խաբել չի կարող, գողն և գողակիցն ի միում պատժի  
կան:

—Խնչ ես ասում, տէրտէ՛ր, պարզ խօսի՛ր:

— Ասում եմ, որ Սամփառնն այս բովէիս Բարսեղի տանն է:

— Է՛հ:

— Կարգս վկա՞ց:

— Էնչի՞ց գիտես, տէրտէ՛ր, չէ՛ որ Խուզօն ասում էր, թէ իւր տղաքի նշանը վերցրել է Բարսեղը, ես էլ կարդաղրել եմ; Հէնց հիմի գործակալը կը գայց, քննութիւն կ'անի, խորթութիւն կը մացնի Հըհասի մէջ և գործը կը վերջանայ:

— Հէնց էդ է որ շան աղջիկը զալում (Խորտակնէ) էր, նշանը վերցրեց, առաջինն՝ իր խելքով՝ Սամփառնի մահապարտական թերթը պատուել տալու դիտմամբ և երկրորդ՝ մի շարաթ ժամանակ նըշանակելով, որ միջոց գոնեն, գործակալից մի հնարքով իրաւոնք իննդրեն պսակելու: Բայց ի՞նչ մարդի պոչ էին սառցին կապում, նըրանց ցերեկը ման եկած տեղերն ես գիշերն եմ հազար անդամ ունատակ տուել. հասարակ թուղթը պատուեցի, խսկանը պահեցի, գործակալի յացտարարութիւնը պատրաստեցի և ձեր քամակից մարդ դրկեցի չ'ուշանալ. — երկաթը տաք տաք կը ծեծեն:

— Փառաւորի՛ս, լաւ ես մոտածել, էդ վկայութիւններն այսօր մեզ շատ պէտք են. աշխատելու է որպէս և իցէ Դօնդարենց Ասօյի սպանութիւնը Դվակոթենց հեռացնել, Սամփառնի վզովը փաթաթել, Բարսեղի աղջկանն էլ պսակել մեր Խուզօյի տղի վրայ:

— Էդ երկու դորձն էլ վերջացած համարի: Էնքան լինի Սամփառնը փոքր կասկածանքի տակ ընկնի, Բարսեղն իր ձեռքովը դուս կը քաշի աղջկանը, կը տայ Խուզօյի տղին, եթէ ինչպէս ասում ես, խորթութիւնը հաստատուի:

— Բայց ընչի՞ց գիտես, որ Սամփառնը Բարսեղի տանն է. քըննիչը տասն անդամ սպառնաց թագցնողին խստիւ պատժել, մի՞թէ Բարսեղը գիտութեամբ լրեց:

— Բարսեղն անաստոնների մէկն է, աղջիկն իւր նմաններին օրական տասն անդամ կը տանի ջուրն ու ծարաւ յետ կը բերի. նա իւր հօրն ու մօրն էլ է խաբել:

— Եթէ մինչև Խուզօյի նշանը վերցնելու օրը Սամփառնը միայն գիշերներն էր գնում Բարսեղի տունը, այնուհետև ցերեկներն էլ նըրանց գոմից չի զուրս գալիս, ես հսկել եմ տուել և ստուգել. այդ էր պատճառը; որ ձեր գալը փութացրի, ի՞նչ լաւ տեղն էլ պատա-

հել էք. ինչպէս ասած է՝ կաղը կամրջի վրայ էք բռնել, աղջկաց խորհրդով Գալօն Մելիքին ու Սիսակին առած՝ գործակալին էր գընում:

— Էղ թո՛ղ, տէրտէ՛ր, հիմի ասում ես Խուղօյին ուղարկենք Բարսեղի գոմը պտուելո՞ւ, հարցրեց Մելիկովը:

— Կարիք չը կայ, ես ամեն բան կարգադրեցի, հէնց հիմի տանուտէրի օգնականը կը բերի, բերանս քեզ հետ էր խօսում, աչքերսն րան էր բան հասկացնում:

Ուղիղ էր տէր-Խուղիասի խօսքը. երկու զազախի հակողութեամբ տանուտէրի օգնականը ներս բերեց Սամփիսոնին:

— Ո՞րտեղ էր, հարցրեց Վասիլ Վասիլիշը:

— Բարսեղի գոմումը, պատասխան տուեց տանուտէրի օգնականը:

— Կանչել Բարսեղ Ալէքովին և Գալօ Պետրոսովին, հրամացեց Վասիլ Վասիլիշը:

— Մենք ենք, յառաջ եկան ժողովականների միջից Գալօն և Բարսեղը:

— Դու ի՞նչ իրաւունքով տանդ թաղցնում ես մարդասպանին, հարց տուեց քննիչը Բարսեղին:

— Ի՞նչ մարդասպան, աղա՛յ:

— Սամփիսոն Գալօցեվին — բո փեսացին:

— Մէկ՝ աղայ ջա՞ն, որ Սամփիսոնն իմ փեսէն չի. մի դարդակ խօսք էինք տուել՝ էն էլ տէրտէրին ու տանուտէրին յացնի ա, որ ես խօսք յետ առաջ. մէկ էլ՝ որ մի շաբաթից աւել ա, ես Գալօվին ու իր տղին էլ ասել եմ, որ սրանից յետոյ իրանց կորածն ինձանում չը պտուեն, հիմի էլ զարմանում եմ, թէ ի՞նչպէս էլաւ, որ Սամփիսոնն իմ գոմիցը դուս եկաւ:

— Թողէք՝ ես պատմեմ, խնդրեց Սամփիսոնը:

Նրան իրաւունք տրուեց խօսելու:

— Սուտ չի, որ Բարսեղ ապէրն (*պատուանուան*) մի քանի օր ա, ինձ տուն չի թողում, բայց էն էլ ճշմարիտ ա, որ քանի դուս արած չէի, մենակ գիշերն էի գնում, ընդուց յետոյ ցերեկն էլ եմ նշանածիս հետ սհաթներով գոմումը ջան ասում, ջան լսում. Ասուածանից թաքուն չի, աղա՛յ, էս բազմութիւնն էլ թող իմանայ. ոչ իմ հէրն էր զիտում, թէ քանի օր ա իր տղէն ո՞ւր ա կորչում,

ու Բարսեղն ու իր կնիկն էին իմանում, թէ իրանց աղջիկն ընչի՞ աշուտ շուտ վերև ներքև անում բակը:

—Այժմ ասա՛ ինձ, Սամփսոն Գալուստով, հրամայեց քննիչը. հաստատ վկայութիւններով դու մեղադրուում ես Ասատուր Դօնդարովի սպանութեան գործումը. յանձն առնո՞ւմ ես, դո՞ւ ես սպանել, քեզ յանցաւոր ճանաչո՞ւմ ես:

Քննիչը ցոյց տուեց Սամփսոնին հրաշքով կենդանացած տէր-Սուքիասի ձեռքով պատառուած վկայագիրը՝ մի քանի ուրիշ թղթ-թերի հետ:

—Աստուած էլ գիտի, աղա՛յ, որ ես էդ բանիցն անտեղեակ եմ, ընչանք էս օր ինձ կախ տային, էլ պէտք ա ձէն ածէի, թէ անմեղ եմ. բայց էս օր նշանածն, չը գիտեմ ո՞ր մեղքիս համար, կորական ինձ ասաց, որ իր հօր հրամանն ա կատարելու, տանուտէր Խուզովի ար-ղին ա առնելու. թէ որ էդպէս ա, էլ ապրելն ի՞նչ կանեմ, լաւն էն ա, մի անգամ հա ասեմ ու պլծնեմ. հրամելէք, աղա՛յ, Դօնդա-րենց Ասօյին ե՛ս եմ սպանել:

Ուզիղ էր ասում Սամփսոնը. Սօնան այդ հնարքն էր մտածել իր սիրեկանի աղատութեան համար:

—Ես քո սիրային յարաբերութիւնների հետ գործ չ'ունիմ, խոժոռուեց քննիչը, դու ինձ կարճ պատասխան տուր, սպանե՞լ ես Ասատրին՝ թէ ոչ:

—Սաքի չէ էլ ասեմ, պլծնելու չեմ, ճղճառուած թուղթը նորացել ա, վկայքն էլ պատրաստ են. աղատուեմ էլ՝ աչքս բաց չը պտի կարողանամ նշանածիս ուրիշի կնիկ դառած տեսնել, մահը՝ հա՛ էս օր, հա՛ էքոց, լաւն էն ա՝ կ'ասեմ՝ սպանել եմ ու էս օրուա-նից կ'ազատուիմ էս քանդուելու աշխարհից. հա, աղա՛յ, հէնց ես եմ սպանել իմ ձեռքովս:

—Օրէնքի առաջին երկիմի խօսելն ամելորդ է, կարճ ասա՛, Սամփսոն Գալուստով՝, մի քանի գօկումենտներով հաստատուումէ Ասատուր Դօնդարովի սպանութիւնը քո ձեռքով կատարուած. ճա-նաչո՞ւմ ես քեզ յանցաւոր այն գործում:

—Արդէն ինքն իւր բերանովը խոստվանուեց, էլ ի՞նչ կարիք կայ նոր հարցմունքների, ընդմիջեց քննչին Մելնիկովը ոռուերէն:

—Սխալուում էք, հեգնաբար և պատճառաբանեալ խօսքերն ա-

պացոյց չեն կարող լինել, պատասխանեց նրան քննիչը և շարունակեց բազմակողմանի հարցերի դիմել:

Մենիկովի և իւրացնոց յուսախարութիւնը աստիճանաբար առելանում էր, իւրեանց քաջ յալտնի էր Վանեցու ձեռքով պատրաստուած գրաւոր ապացուցների անզօրութիւնը, իսկ Սամփանը յամառուել, մնացել էր:

—Ես իմ ասելիքներս վերջացրի, վճռաբար շեշտեց նա քննիչն, նշանածից զրկուելուց Սիբի՛ր գնալը շատ կ'ուզեմ:

—Ես ստիպուած եմ ուրեմն քեզ բանտարկել և վկաներին հարցնել, հասկացրեց քննիչը Սամփանին:

Դժուար էր ենթադրել, թէ ի՞նչ խորախորհուրդ միտք յղացաւ այն րոպէում տէր-Սուքիսի ուղեղում, որ յական թօթափել՝ մօտ կանչեց Բարսեղին, ինչ որ քչիչաց նորա ականջին և հաղորդեց Մենիկովին:

—Կարելի՞ն է խօսք խնդրել, հարցրեց յանկարծ քննչից Բալասան աղէն:

—Կարող էք:

—Կը խնդրէի թոյլ տալ ինձ երկու րոպէ առանձին տեսակցել Սամփանի հօր հետ, իսկ մինչև այն ժամանակը՝ Կղաղարեցնէիք հարցմունքները:

—Գալ-ափի՛ւ, մի կողմը քաշած՝ իրաւունք ստանալուց յետոյ՝ ասաց Բալասան աղէն, Սամփանը դեռ երեխայ է, նա չը գիտէ, որ ես իրան իմ նեսկօյի չափ սիրում եմ, նեսկոս մեռնի, թէ սուտ եմ ասում, դու ականջովդ լսեցիր, որ Սամփանն իր բերանովը խոստովանուեց. քննիչին այդքանը բաւական էր, նա ի՞նչ կը հարցնի, թէ սիրածի սառը պատասխանի պատճառով է ուղում կորչիլ. ես ըստէին քննիչը տղիդ կռները կը կապի, կը զրկի բերդը, բայց այդ ինձ համար մեծ ցաւ է, դու էլ մեղք ես. եթէ դու ինձ հաստատիսք կը տաս, որ տղիդ Բարսեղի աղջկանից ձեռք քաշել տաս, ես երաշխաւոր կը լինիմ, չեմ թողնիլ բռնի, վերջը մի տեսակ բոլորովին կ'ազատենք:

—Ուսներիդ մեռնիմ, աղայ ջա՞ն, իմ տան ճրագը մի՛ հանդցնէք, վերև Աստուած՝ ներքեւ դու, ըստուց յետոյ Բարսեղի աղջիկը քաշովը մին ոսկի էլ ամենայ, մեզ պէտք չի, Աստուած իրահետ, ում կ'ուզի՛ թող տանի տայ:

—Ես քեզ հաւատում եմ, Գա'լ-ափու, դու լաւ մարդ ես, միամիտ կաց, քո տղին կ'աղատուի, ապահովացրեց Սելնիկովը: Բայց պէտք է աշխատել, որ քննիչը չը թշնամանայ հետը, շատ զուր է Սամփանը նրան բարկացնում, մին հա է ասում, մին չէ, էղ իրան վնասում է. ամենից լաւն էն է, մի անգամ վճռաբար ասի՝ ես եմ սպանել ու ծէրին կապ տայ. ես էստեղ չ'մ, չեմէլ թողալ բռնեն. փա՛ռք Աստծու, աչքիդ առաջին ազատ ման է գալիս Դվակոթենց Հայրօն. տեղիցը վեր կենողը ձէն էր տալիս, որ նա է սպանել, բայց ես գնացի, երաշխաւոր կանգնեցի և բերդիցը հանեցի:

—Աստուած կեանքդ երկար անի:

—Դէ տեսա՞ր, որ ձեռիցս գալիս է. քո խելքը ո՞րտեղ է, թո-կից փախածին որ տէր եմ կանգնում, քո գառը մինուճար տղին դէն կը շպրտե՞մ:

—Հիմի ի՞նչ ես հրամանք անում:

—Պէտք է խօսք հասկացնես Սամփանին, որ քննիչին կտրական պատասխան տայ, հա՛ ասի ու պրծնի:

—Բայց որ հա ասի, մեջը թաղուի ու իմ տունը քանդի՞:

—Անգէ՛տ, ես մարդ չ'մ, ես որդի չ'ունե՞մ, ես խղճմտանքից զուրկ ե'մ, ես կ'ուզե՞մ, որ քո տղի մազը թեքուի, նեսկօյիս թա-զեմ, թէ որ էս սհաթը չ'աղատեմ: Այ, թէ չես հաւատում, քո ա-ռաջին հարցնեմ քննիչից օրէնքը:

—Պարոն քննի՛չ, դարձաւ Սելնիկովը, եթէ Սամփան Գալուս-տովը յանձն առնի մեղադրանքը՝ կարելի՞ սրան ազատել բանտար-կութիւնից կամ պատժից:

—3000 մանէթ գրաւականը կ'աղատէ սրան ժամանակաւորա-պէս, իսկ վերջը կամ տաժանակիր աշխատանքի կը դատապարտուի, կամ գուցէ և ազատուի:

—Հիմի ո՞նց է, Գա'լ-ափու, խօսքս խօսք է, թէ ոչ. կարո՞ղ եմ ազատել, թէ չէ:

—Ի՞նչ ուզես, աղայ ջա՞ն, որ ձեռիցդ չը գալ:

—Դէ ինձ լսի՛ր, համոզի՛ տղիդ, որ ասածս կատարի, հա՛ ասի:

—Սամփան ջա՞ն, արևիդ մատաղ, ձեռդ աղի փէշը քցի, սը-րան լիի, վիզը ծռած խնդրում էր հայրը:

— Ի՞նչ ես կամենում, աղա՛յ, որ անեմ, ուզում ես՝ որ Բարսեղի աղջկանիցը ձեռք քաշեմ։

— Ոչինչ չեմ ուզում, լրջօրէն պատասխանեց նրան Բալասան աղէն, քո հօր խաթեր՝ ես պատրաստ եմ 3000 մանէթը տալ, քեզ աղատել, թէ որ դու մի անգամ վերջնական խօսքն ասես։

— Եա՛տ զուր ես անում, աղա՛յ, սլէտշին պարզն ասաց, մարդասպանի տեղը Սիրին ա։

— Դու ջահէլ ես, Սամփսո՞ն, գլուխոր քարովն ես տալիս, քո հօրն եմ խեղճ գալիս, մի սխալմունք ա, արել ես, կամ չես արել, կորածը կորել է, սաղին էլ հետը կորցնելով՝ ձեռքներս բան չի ընկնիլ, իմ պարտքն է քեզ օգնելը, ես երաշխաւոր կը լինիմ քո փոխարէն։

— Զը փոշիմանես, աղա՛յ։

— Սամփսոն ջա՞ն, հօրդ ծերութիւնին խեղճ արի, աղին լսի, Ասուուած իր բալէն պահի, թող քեզ օգնի, թող զամին (Երաշխաւոր) կանգնի, իմ դուռը մի փակիլ, աղաչում էր Գալօն։

— Սպասի՛ր, Սամփսո՞ն, յառաջ եկաւ տէր-Սուքիասը նախապէս ակնարկ ձգելով Մելնիկովի աչքերին, եթէ Բարսեղի աղջիկը քեզանից չը հանուի, աղին իրաւունք կը տա՞ս, որ զամին կանգնի, քեզ աղատի։

— Դու Է՞լ, տէրտէ՛ր, հեգնաբար պատասխանեց Սամփսոնը, չընի՞թէ ուզում ես սաղացած թուղթը նորից պատուել, բէլգեահի յետ վերցնել։

— Հա՛, որդի՛, հա՛, էս ձեռովկս քանդածը նորից մէկէլ ձեռովկս կը շինեմ, էս աջովը քեզ կը պսակեմ, աջս ինձ խորվ կինա՛յ, թէ սուտ եմ ասում, էս բազմութեան մօտ եմ խոստանում, թաք ընի դու հօրդ խղճաս, թողաս՝ աղէն երաշխաւոր դառնայ։

— Անց որ տեսնում եմ՝ տանուտէր Խուղօն էլ ուրախ կը լինի, որ ես էս փորձանքից ազատուիմ ու Բարսեղի փեսէն դառնամ, չէ՞ տէրտէ՛ր, ամենքդ ինձ ձեր որդոնց պէս սիրում էք, դառն ժպիտով գլուխը շարժում էր Սամփսոնը։

— Հա՛, Սամփսո՞ն, հա՛, թէպէտ դու ծաղրում ես, բայց հէնց էղակէս ա, որ կայ, ինձ լսի՛ր, հօրդ ծերութիւնին ինայիր, դու թող մեր աղէն զամին ընի. խօսք եմ տալիս, որ ինքս քո խաչ-աղպէրը դառնամ, Բարսեղի աղջիկն իմ ձեռովկը դուս քաշեմ, քեզ տամ, մէջ

մոտաւ Խուդօն՝ տէր-Սուքիասի և Մելնիկովի աչքերի հայեացքից թելաղրուած:

—Ել ի՞նչ ես ուզում, ա'յ որդի, Սամփառն, բաս ես մեղք չեմ, բաս քո մէրը խեղճ չի, ընչի՞ ես ուզում մեզ ողջ ողջ գերեզման դնել, թող աղէն զամին ըլնի, քեզ ազատի, լալով աղերսում էր Դալ-ափօն:

—Թող քո ասածն ըլի, միամիտ իմ հէ՛ր, խորին հառաջանքով զլուխը տարուբերում էր երկար ժամանակ Սամփառնը:

—Ասա՛ վերջին խօսքդ, Սամփառն Գալուստով, կրկնեց քննիչը:

—Թող Բալասան աղէն իմ տեղակ զամին ըլնի:

—Ուրեմն խոստովանում ես յանցանք:

—Հը՛, հը՛, հը՛...

—Ամօթ է, Սամփառն, քննիչին էրպէս չեն պատասխանիլ, յանդիմանեց նորան Բալասան աղէն, ի՞նչ ես վախում, կամ կասկածանք անում, ես ողջ կենամ քեզ համար, սարի պէս քամակիդ կանգնած եմ. Նեսկոս մեռնի, թէ սուտ եմ ասում, ասա՛ սպանել եմ ու վերջացրու, թող էն անմեղ Հայրօն էլ ազատուի՝ պրձնի:

—Ընչունքի դու՝ քո հրամանքդ կամենում ես, որ ես իմ լեզուովս ասած ըլնեմ, թէ ես եմ սպանել՝ նոր զամին կենաս, աչքիս վրա՛յ, քո թանկադին խաթեր համար կասեմ:

—Ալէսոչի աղա՛յ, խնդրեմ գրես, որ Ասատուր Դօնդարովին ես իմ ձեռովս եմ գիւլլախորով արել (Գնդակահար), հաւի պէս թռպղուտացրել, վէր քցել, Հայրօ Դվակոթովը մեղաւոր չի, Բալասան աղէն ասում ա՝ Հայրօն խեղճ ա, անմեղ ա, խնդրում եմ Բալասան աղի խօսքը կատարես, Հայրօյին ազատես, իսկ ինձ բխովես (շղթայել), բերդը տանես ու Սիրիր դրկես:

—Դուք կարող էք ձեր երկդիմի խօսքերով արդարանալ կամ դատապարտուիլ դատարանում, բայց ես գրաւոր ապացոյցների ճշդութեան վերայ հիմնուած՝ օրէնքի անունով ձեզ բանտարկում եմ, վճռեց քննիչը և պատուիրեց կապել Սամփառնի կոմերը:

—Ես կը ցանկացի նշանակեալ փողը վճարել և երաշխաւոր լինել մեղադրուածի համար, եթէ օրէնքն այսօր թոյլ կը տայ, հարց առաջարկեց Մելնիկովը:

Այս միջոցումը տանուտէր Խուդօն ներկայացրեց քննչին մի նա-

մակ Սիսակի ձեռքով գրուած, որ ըստ իւր ասութեան՝ մի քանի օր յառաջ բռնել էր:

Նամակը գրուած էր Սիսակի կողմից փաստաբան Բարանովին, որին մանրամասն պատմելով Ասատուր Դօնդարեանցի սպանութեան դրծը, խորհուրդ է հարցնում նրանից, թէ ի՞նչպէս պէտք է վարուել այն դէպքում, եթէ այդ գործով մեղադրուած և Մելնիկովի երշխաւորութեամբ ազատ թողուած Հայրապետ Դվակոթեանցն արդարանայ և նորա փոխարէն մի ուրիշը հաստատ վկացութիւններով յանցաւոր ճանաչուի. Հնարաւորութիւն կա՞ց արդեօք հաստատ մարդասպանին արդարացնել, իսկ միանդամ մեղադրուած Հայրապետին կրկին դասապարտութեան ենթարկել տալ:

Նամակի մէջ Սիսակն ի՞նքը խոստովանում է Դվակոթեանցի անմեղութիւնը, բաց նորա ազդեցիկ պաշտպանին բարոյապէս կործանելու համար՝ ցանկանում է անմեղ մարդի կրուստը:

Նամակում յիշուած էր Մելիք-Բաղալի և Պետրոսենց Գալովի անունները, սրանք էլ, իբր թէ կամակից են Սիսակին և խոստանում են Բարանովին 300 մանէթ, եթէ նա կարող լինի Սամփսոնին ազատել, իսկ անպարտ Դվակոթեանցին մեղքի տակ ձգել:

—Մեր գիւղի տունը, միշտչի աղա՛ց, էդ նոր ուսումնականներըն են քանիքում, նամակը ներկայացնելով՝ բողոքեց Խուզօն, թէ մի բարերարութիւն անես, էս տեսակ խարդախների ու խառնակիշների արմատը մեր գիւղիցը կտրես, գեղովի քեզ կեանք ու արև կը խնդրենք:

Քննիշը նամակը լաւ զննելուց յետոյ՝ հրամայեց կանչել Սիսակին:

Մարդ ուղարկելու կարիք չը մնաց, դուռը բացուեց և լերդապատառ տուն ընկաւ Սիսակը, մի կապոց կոնսատակին մեծ խնամքով հուպ տուած:

**ԻԴՆ.****ԵՐԵՍՓՈԽԱՆՑ.**

Որպէս զի իմանանք, թէ ո՞ւր էր մինչև հիմա Սիսակը, ինչո՞ւ ներկայ չէր նա քննութեանը, ի՞նչ կատոց էր նորա կոնստակին սեղմածը, մենք պէտք է մի փոքր յառաջ դնանք:

Սիսակն աւելորդ էր համարել առանց հրաւիրանքի ներկայ լինել քննութեանը. նա ձիուց իջաւ, քաշուեց իւր տունը, վստահ լինելով՝ թէ հէնց որտեղ որ է, եասաւուլը կամ գզիրը դուռը բաց կանի և իրան կը պահանջի:

Սակայն որքան զարմացաւ Սիսակը, որ քիչ միջոցից ժամհարը ներս մտաւ և յայտնեց, որ գործակալ հայր տուրքն եկել է, իրան ինդրումէ:

— Ո՞րտեղ է իջել, ե՞րբ և ընչի՞ համար է եկել, ո՞վ կաց հետը, ո՞ր կողմիցն է գալիս. մի քանի հարց միասին առաջարկեց Սիսակը: — Իջած է երեցփոխի տանը, կարճ պատասխանեց ժամկոչը:

— Բարի՞ լինի, հայր տ' ւրբ, ո՞ր տեղից և ընչի՞ համար, կրկնեց Սիսակը ժամհարին տուած հարցերը գործակալին:

— Իմ վանքից՝ ուղղակի մեր երեսփոխան ծերունի Ղազարին հիւր, ժպտաց գործակալը:

— Բայց ի՞նչ առիթով:

— Օրհնա՛ծ հոգի, ամբողջ գաւառումը մի հատ երեսփոխան ունինք, որի սիրտն իւր մեծ դռնից աւելի լայն է բաց՝ բոլոր հոգեորականներին համար՝ և դու զարմանո՞ւմ ես, որ առանց օրինաւոր պատճառի սիրտս ուզեց մի երկու օր ուրախ անցկացնել Ղազարհայրիկի և բարեկամաց հետ միասին:

— Ղազար-բիձէն մեր գիւղի հայր Աբրահամն է, հա՛յր սուրբ, բայց դուք, կարծեմ, առանց օրինաւոր պատճառի չէիք նեղութիւն կրիլ:

— Եատ մի՛ շտապիլ, Սիսա՛կ, դեռ նատի մի փոքր գոտիներս պնդացնենք, յետոյ կը խօսենք. չե՞ս տեսնում Ղազար-հայրիկը քանի տեսակ խորտիկ է դիզել սփռոցի վերաց. բարեպաշտ մարդը կարծումէ, թէ լիռնից իջածներ ենք՝ աշխարհք չը տեսած:

— Թողութիւն կանէք, աջիդ մեռնե՛մ, ձեր տունն ա, աւել պակասը բաշխեցէ՛ք, «աղ ու հաց՝ սիրտը բաց», վկաս չունի, մի քիչ

ՆՀԱՐ (Նախաճաշշին) արէք, իրիկունը գիւղի իշխաններն էլ կը հաւաքուին՝ մի լաւ քէֆ կանենք, ներողութիւն էր խնդրում երեց-փոխ Ղազար-բիձէն։ Մէկ էլ շատ լաւ էլաւ, որ շնորհք բերիր, աւելացրեց նա. էն ա՝ տարին վերջանալուն մօտ ա, էգուց հասարակութիւնը կը հաւաքեմ, եկեղեցու հաշիւները մաքրենք, ինձ էլ ազատեցէք, էս ա՝ մի ոսու գերեզմանումն ա, ծերացել եմ, էլ չեմ կարողանում առաջուայ պէս պարտքս կատարել, հոգուս մեղք ա լընում։

—Իրաւո՛ւնք ունիս, Ղազար-հայրիկ, երեսփոխանութիւնը շատ աժան չի նստում քեզ, դու այսօր հայ նախկին երեսփոխանի բուն տիպարն ես. վեց տարի է ես գործակալ եմ, մի քանի շրջաններ էլ ուրիշ ժամանակներ եմ կատարել և այսօր միայն քեզ եմ գոնում երեսփոխան, բառի էական նշանակութեամբ, կերակուրը թողած՝ ճառաբանում էր գործակալ հայրը. դու, . ի հարկէ, չը գիտես երեսփոխան բառի բուն նշանակութիւնը, բայց մեր Սիսակին յալտնի է. այդ խօսքը ոչ թէ խօսպէս երեցի-քահանայի փոխարէն է նշանակում, ինչպէս շատերը կարծում են. իմ հասկացողութեամբ՝ դա աւելի լայն նշանակութիւն ունի. երեսփոխան ասել է՝ ամբողջ հասարակութեան—համայնքի երեսի կամ անձի փոխարէն. հայ ժողովուրդն ընտրելով իւր անդամներից մի յարգելի և վստահելի անձնաւորութիւն իր Աստուծոյ տանը տնտես և կառավարիչ՝ նա կարգել է նոյն մարդուն իւր ամբողջութեան երեսի իրաւունքի տէրը՝ Աստուծոյ անունով ժամանակ անժամանակ շնորհ բերող հոգևորականներին, անծանօթ պանդխատին, մեծին, փոքրին, տնանկին, անտուն անտէր չքաւորին պատսպարելու և ճանապարհ դնելու։

—Իմ կարծեօք՝ այդպիսիները շատ սակաւ են, հայր պատուակա՞ն, կամ աւելի լաւ ասել, գաղափարական են, բայց ի հարկէ բացառութիւններ միշտ կարող են լինել, ինչպէս մեր Ղազար-բիձէն, ընդհատեց Սիսակը։

—Այսօր, սիրելի Սիսակ, քո խօսքն ուղիղ է, արդէն իմ կեանքի արևն էլ թեքուել է դէպի մուտքը, գլուխս Մասեաց կատարից ճերմակ է և ես մեծ յուսահատութեան մէջ եմ, որ մի ժամանակուան իրականը այժմ բացառութիւններ և գաղափարական են համարում, և մի օր, գուցէ, խօսկան երեսփոխանի հետքը չը մնայ: Կարող եմ քեզ հաւատացնել, որ քանի կեղծ քաղաքակրթութիւնը

ներս չէր մտել հայ աշխարհը, քանի սակաւապէտութիւնն առաքի-նութեան՝ և շռայլ ունայնասիրութիւնը քաղաքավարութեան և հիւ-րասիրութեան աստիճանաշափ չէր ընդունուած՝ մեր բոլոր երեսփոխան-ներն իմ նկարագրածներիցն էին, որոց վերջին ներկայացուցիչը, մեր ծերունի Նազարը, դեռ առկայծում է։ Նատ լաւ ցիշում եմ, թէ ի՞նչպէս ի հնումն տարին մի անգամ երեսփոխանը իմ առաջին՝ բո-լոր հասարակութեան աչքի առաջ՝ կը պարզէր իւր հաշիները։

—Եւ ի հարկէ գրաւո՞ր, հարցեց Սիսակը։

—Ի՞նչ ես ասում, որդեա'կ, ո՞ւր էր գիր, ո՞ւր էր գրիչ։

—Ահա մի հրապարակում ամբողջ գիւղական համայնքը հաւաք-ռած՝ լուսութեամբ լսում էր իւր երեցփոխի բանաւոր յայտարա-րութիւնը։—

—Գանձանակից, մոմավաճառութիւնից, լուսագնից և այլ եկա-մատներից ընդամենն եղել է այսչափ գումար, ծախուած է այսչափ, տակը մնում է այսչափ, ինսամի Պետրոսի վրայ պարտք կայ առանց մուրհակի՝ այսքան, ուստոյ Դրիգորի վրա՝ այսքան, մահտեսի Սուա-քելի վրայ՝ այսքան։ մէկի ժամանակը լրանում է Աստուածածնի պասի չորեքշաբթի օրը, միւսինը՝ նաւասարդի շաբաթ օրը, երրոր-դինը՝ Անառուակի կիւրակէ օրը և այն։ մէկի տոկոսը ստացել եմ, միւսից ցորեն պէտք է ստանամ, երրորդին խղճացել, առանց տոկոսի եմ տուել. այժմ եկեղեցին ունի զուտ փող՝ այսքան և այն, և այն։

—Աստուած որդիքդ պահի՛, հոգւով միխթարութ'ս, սուրբ ե-կեղեցին քո մինը հազար անի՛, քո փչացրածն Աստուած ինքը լրացնի՛—լսում և միխթարուում էր երեցփոխը։ Մանաւանդ սահ-ման չէր լինում նորա ուրախութեանը, եթէ համայնքն անուշաղիր էր գտնուում դէսկի նորա առաջարկութիւնը, կրկին թողնում էր նրան պաշտօնի մէջ և ես իբրև գործակալ, կամ տէրտէրը մեր ան-արժան բերանով մի պահ պահն իշով վերահաստատում էինք նոր երեսփոխանութիւնը։

—Ես երեակայում եմ, թէ ո՞ր աստիճան հոգեպէս վար-ձատրուած էր համարում իրան այդպիսի բարեպաշտ երեսփոխանը, հայր սո'ւրբ, ասաց Սիսակը։

—Վարձը, որ երեսփոխանն ստանում էր ձրի կատարած ծառայու-թիւնների համար, շատ վսեմ էր, շատ միխթարական էր. այդ նորա

հողեկան ուրախութիւնն էր, այն քաղցր համակրանքն էր, որ զիւղի մեծ ու փոքրը, իշխանն ու աղքատը նրան յարգում էին, նրան սիրում էին, նրան ընդունում էին: Երեսփոխանն իրաւունք ուներ քահանացի հետ միասին, շատ անգամ միացնակ, ել ու մուտ անել աղատօրէն իւր երաշխաւորող ժողովրդի յարկի տակ, խորհուրդ ստանալ, խորհուրդ տալ, կարիք ունեցողի կարիքն իմանալ, դարմանելու հոգար քաշել, նրանց ուրախութեանն ուրախակից, նրանց տրտմութեանը տրտմակից և վշտերին կարեկից լինել:

—Բնական էր ուրեմն, որ հասարակութեան այնպիսի պատկառելի անդամակիցը համահաւասար սիրելի կը լինէր ամենքից, եզրակացութիւն արեց Սիսակը:

—Հա՛մ սիրում էին, հա՛մ խօսքը գետինը չէին քցում, միջամտեց Նազար-բիձէն. մենք ի՞նչ մութավելի (եբեցփոխ) ենք, մութավելին իմ լսի բաժին հէրս էր, ես նրա ոտի հողին չեմ արժան, մի մազ պտի ըլնէի՝ նրա փէշիցը կախ, զլուխը յետ դրած էր էս գեղի համար, 30 տարի մութավելութիւն էր արել. քանի դուս էր գալիս, նոր ընտրում էին. ինքն էլ ուրախութիւնով ընդունում էր ու իր դուռն աւելի լին բաց անում: Ես ջահէլ էի, լաւ լիշում եմ. հօրս երեսը ծիծաղ չէր գալ, եթէ մի օր մէջ տար ու մեր մեծ օդումը, տանը և օթախումը երկու երեք վարդապետ, օտար տէրտէր, ճամբորդ, ուզւոր, մուրացկան չըլնէին, մեր սեղանի վրայ զարիբ-զուրբաթ (պանդուխոֆ) չը նատէր, մեր հացի պոռունգը Ասոծու զօնադը (հետք) չը կտրէր, մեր մարագի ծաղիկը ծէրին, շորացրած եօնջայ խոտը (սառոյա) դիզումը հանգիստ մնար: —Այ ճար կտրածի մա՛րդ, մի մի անգամ թոնթորում էր ողորմածիկ մէրս, ախար ոչ ջաններում ջան մնաց, ոչ տաշտերում հաց, հիմի էլ թող ուրիշներն անեն, մենք հօ էս գեղին տնով տեղով ճորտ չե՞նք զրուած, ընչանք ե՞րբ, հերեք չի: —Զէ՛նդ, ձէ՛նդ, ա՛յ Եւայի աղջիկ, բարկանում էր հէրս, ուզում ես ինձ ճամփից հանե՞ս. ընչի, մենք էս գեղցցի չե՞նք, մեր երթկի մուխը գեղի միի հետ չի խառնուում՝ երկինք բարձրանո՞ւմ: գեղը որ կայ՝ մի մեծ տուն ա, տէրտէրն էն տան հոգեսոր զլուխն ա, տանուտէրն ու երեցփոխը տէրտէրի մեծ որդիքն են, մինը պտի էն տան անդամների աշխարհացին հոգերը քաշի, նրանց ապրուստին, նիստ ու կացին, լաւ ու վատին զլուխ

քաշի, մէկէլը նրանց Աստծու հրամանները կատարելու ճամփիքը պատրաստի: Տէրտէր, տանուտէր, մութավէլի, գզիր, ջրբաժան, ժամհար՝ բոլորս էդ մեծ գերդասառունի ծառէքն ենք, նրա ընտրածներն ենք. մեր տունն է՛լ, մենք է՛լ, մեր ունեցած չունեցածն է՛լ մեր գեղինը, մեր հասարակութիւնինն ա, էդ մի պարտք ա, սլտի կատարենք. էս օր ես եմ, էգուց դրւ ես, երկու տարուց Պօղոսը, հինգ տարուց Պետրոսը. մենք մին մնու համար ենք, մի ձեռը ծափ չի կարող տալ, ունեցողը չունեցողին, հարուան աղքատին, զօրեղն անզօրին պարտական ա. էս օր ինչ իմն ա՝ քոնն ա, ինչ որ քոնն ա՝ նրանն ա՝ ով որ ինքը տուել ա, ինքը ստեղծել ա, ինքը ամենքիս էլ մի աչքով իր աթոռից մտիկ ա տալիս: Այս, սրանք էին իմ հօր պատասխանները՝ իր տան տիկնոջը:

—Դէ՛ ասա՛ դու էլ քո հօր ճանապարհն ես բռնել էլի՛, ընդհատեց Սիսակը:

—Մեղա՛ց Աստծու, կիսին էլ արժան չեմ, գլուխը շարժեց երեցփոխը, իմ հօր սիրալ կը վերցնէ՞ր, որ հայր սուրբս գար, վէր գար ու հիմի մենակ քեզ հետ նստէր էս աղքատ սեղանի վրայ՝ հաց անուշ անէր. սրա պէս թանկագին զօնաղի պատիւը բարձրացնելու համար՝ պտի սրա չորս կողմը շարուած ընէին գեղիս յառաջաւոր իշխաններն ու սիստակամիրուք հալիւրները. գալիս էին, նստում, վացելում, ժամանակ անցկացնում եկող պատուելի զօնաղի հետ ու վեր կենում գնում:

—Ո՞վ զիտէ՝ մի դատարկ շնորհակալութիւն էլ չէին անում, հետաքրքրութեամբ հարցրեց Սիսակը:

—Ի՞նչ շնորհակալութիւն, մարդ իր տանն իրանից շնորհակալութիւն կանի՞. շնորհակալ էին ըլնում Աստուածանից, որ էսպէս ազիղ զօնաղ էր զրկել մեզ համար:

—Այժմ համեմատեցէ՛ք, հայր սուրբ, ներկայ երեսփոխաններին մեր Ղազար-բիծի լրսահոգի ծնողի և իւր հետ, քանի՞սը կը գտնէք սրանց օրինակին հետևողներ, սրանց պէս հաւատարիմ աւանդապահներ:

—Ի՞նչ էք ասում, սիրելի Սիսա՛կ, հոգւոց հանեց գործակալը. այժմեան երեսփոխանութիւնը խայտառակութիւն, նախատինք է մեր ազգի համար:

— Եթէ ձեզ նեղութիւն չի լինիլ, մի ընդհանուր պատկեր ներկայացնէիք, շատ հետաքրքրական է, դուք քաջ գիտակ էք և փորձուած, ինդրեց Սիսակը։

— Ցաւալի է, բայց ասեմ. այժմ մարդիկ երեսփոխ են դառնում ոչ իրանց դռները՝ այլ զբանները լայնացնելու համար. եկեղեցին նրանք ստանում են իրեւ մի եկամոտի աղբիւր՝ սեպհական քսակը լցնելու. ոչ միայն գործակալին, կամ օտարական հոգևորականին է սառըն ընդունելութիւն անում երեցփոխը, այլ ճքաւոր մուրացկանի դէմէլ աշքերը փակում է. դժուարը ոտքը եկեղեցու շեմքովը ներս դնեն է. չարչարուի՝ թէ պէտք է կարողանաս նրանից հաշիւ պահանջել, կամ արձակել. ոչ ժողովրդի պահանջը, ոչ հոգեոր իշխանութեան հրամանները չեն ազդում նրա վերաց մինչեւ ոյժ չես գործ դնում։ Անունը կայ, որ կոնսիստորիացի կնքով ժամանած տօմար ենք տալիս՝ տարեկան եկամուոր մանրամասնօրէն նշանակելու՝ բայց երբ կամիս՝ պահանջի՞ր, մեր այժմեան երեսփոխանը քեզ ներկայացնում է մաքուր և անգրիլ տետրակը նոյնութեամբ, ինչպէս ստացել է։

— Զէք պահանջո՞ւմ։

— Բերան ցաւացրո՞ւ՝ որքան կուզես. ամենամեծ շնորհքը, որ նա քեզ անում է, ազդ մի կտոր թղթի երեսի անկարգ, անկանոն խզմզած, իբր թէ, հաշիւն է՝ այս բովանդակութեամբ։

— Հինգ մկրտութիւնից, երեք պսակից, երկու ննջեցելքից լուսգին՝ այսքան, գանձանակից՝ այսքան և այն։ Եթէ զիցուք տարեկան եկամուտ ցոյց տուեց երեսուն մանէթ, դու ինքդ պէտք է ենթադրես, որ եկեղեցին մի քանի կոպէկներ՝ ծախքը դուրս գալուց յետոց անշուշտ պարս է մնացած մեր հաւատարիմ երեսփոխանին, որ իւր բարեպաշտական զգացմունքների թելադրութեամբ՝ առատաձեռն սրտով ընծայում է եկեղեցւոյն՝ ինչպէս ինքն առանց կարմրելոց ասում է՝ վիւր հօր խէրին։

— Ուրեմն նա իւր յափշտակութիւնները ծածկելու համար խոհեմութիւն գործ դրած կը լինի եկեղեցական զարդ ու անօթներ աւելացնել, մի քանի նորոգութիւններ անել, որտեղից միջոց ունենայ գողանալու։

— Գոհ ենք, եթէ գրով ու ցուցակով իրան յանձնուած խաչ ու սփոռցներից իւր դստեր համար օժիտացու, իւր որդու նշանի համար մատանի չը դուրս տանի։

—Բայց մի՞թէ եկեղեցին ոչինչ գումար չի ունենում:

—Նատ էլ ունի, բայց ո՞ւմնից՝ ի՞նչ ես պահանջելու, ժողովուրդը մի առ մի յայտնում է գումարի քանակութիւնը, գիտէ էլ, թէ ո՞վ որքա՞ն է կլանել, բայց ոչ երեսփոխանն է խոստովանում և ոչ նորա հետ միասին մաքրազարդողներն են յանձն առնում. և ի՞նչ ես կարծում, ո՞յք են ընդհանրապէս երեսփոխանի պաշտպանները:

—Գրաւ կը դնեմ, եթէ գիւղական իշխանները չը լինին:

—Այո՛, տանուտէրը, գատաւորները, յառաջաւորները և հարուստները: Բողոքում է նոցա անիրաւութեանց դէմ հառարակութիւնը, փաստերով տեղն ու տեղը ցոյց են տալիս, բայց անօգուտ. գըրաւոր՝ և ոչ մի ապացոյց չը կայ. ստիպուում ես՝ կամ լոել և քո ձեռքով տուած տօմարիդ մէջ բաւականանալ երեսփոխի ցոյց տուած կեղծ հաշիւներն արձանադրելով և կամ դիմում ես կողմնակի մի-ջոցների:

—Ի՞նչպէս:

—Խաձողել է մի քանի տեղ բանալ ալդ զեղծումները, նեղը ձգել խարդախ երեսփոխանին և մի գրաւոր մուրհակ ստանալով իրանից՝ մի քանի ամսից յետոյ օրէնքով պահանջել. սակայն ի՞նչ օգուտ, որ նախ՝ ամեն տեղ և ամեն ժամանակ չի յաջողում և երկրորդ՝ մէկ խարդախին պատժում ես, միւսի որկրին կերակուր տալու համար. ում ձեռքն ընկնում է, նա է ուտում:

—Միակ միջոցն ուրեմն երեսփոխանութիւնը քահանաներին յանձնելն է:

—Այդ էլ եմ արել, սիրելի՛ս, բայց շատ տեղ իրանք քահանացքն ու ինքը բարեկրօն գործակալը աջակցում են անխիղճ երեսփոխանին նորա մութը գործերի մէջ և որկրամոլ հարսի նման մածնի սերը նախապէս երեսիցը քաշում, անցագարար լպսում ու յետոյ տակի մնացած շիճուկը դնում սկեսօր կամ հիւրերի առաջը: Ե՛հ, սիրելի Սիսա՛կ, սիրոս արեան ծով է դար... ուզում էր շարունակել գործակալը, սակայն Ղազար-բիձէն, որ շատ ժամանակ չէր բացակայ էր, կրկին ներս մուաւ, ձեռքին մի կախան խաղող և ասաց. ջա՞ն դուրս գայ քեզ համար, հայր-սուրբ ջա՞ն, կերակուրը սառեց, ինքդ սոված մնացիր, գոնէ՛ քաղցր հաւող էլ ա անուշ արա:

—Բայց, հայր-սուրբ, մենք ինդրից շատ շեղուեցինք, դուք

ինձ՝ ասացիք ձեր շնորհ բերելու պատճառը, հարցրեց Սիսակը գործակալից:

— Դորա համար էլ քեզ կանչել եմ, ասաց նրան վարդապետը, այսօր դու պէտք է օգնես ինձ՝ կատարելով քարտուղարի պաշտօն, ես եկել եմ քննել մի չհասութեան գործ՝ համաձայն ձեր աւագ քահանացի ներկացացրած ճիւղագրութեան և բարձրագրյն իշխանութեան կողմից ինձ յանձնարարած հրահանդի:

— Եւ ո՞ք են ամուսնացողքը:

— Ձեր տանուտէրի որդի Կարապետը՝ Բարսեղ Ալեքեանի դատեր հետ. ինչպէս քահանացն յայտարարում է, մեջը թէև խորթութիւն կայ, բայց տէրտէրն իւր վրայից պատասխանատուութիւնն իսպառ հեռացնելու համար՝ ինդրում է դրածները քննութեամբ և երդումով հաստատել:

— Վայ, նրա տունը քանդուի, ի՞նչ տէրտէր ա, բացականչեց Ղազար-բիձն:

Սիսակը, որովհետեւ գիտէր իրողութիւնը և սպասում էր այդ օրին, չը վհատուեց, այլ բարձրաձայն քահ քահ ինդաց:

Խեղճ Սիսակ, քթերից դուրս եկաւ ծիծաղը. նորա աչքը դիպուածով առաւ սենեկի լուսամտի կոտրուած ապակու փոխարէն կպցրած թղթին և նա այնպէս ծլունդ եղաւ նստած տեղիցը, որ նորից վայր ընկաւ տախտի վերայ:

— Ի՞նչ է այն, ծղրտաց Սիսակը և վեր ցատկեց, մօտեցաւ լուսամուտին:

— Եղեռնագործութիւն, հայր-սուրբ, գոչեց նա և չը կարողանալով անչափ վրդովմունքից խօսել՝ սիրտը բաբախելով՝ մատով գործակալի ուշադրութիւնը հրաւիրեց դէպի թուղթը:

Վարդապետը շտապաւ. մօտ գնաց պատուհանին և խորարէտ աչքերով՝ ակնոցի օգնութեամբ սկսեց որոշել գրուածքը, բայց բան դիմի չ'ընկաւ. թուղթը թափանցիկ էր, լոյս տալու համար դադարած ձեթ էր քսած:

— Ի՞նչ է այս, Սիսակի, ես ոչինչ չեմ հասկանում:

— Աղաչում եմ, հայր-սուրբ, օգնեցէք ինձ, իմ ձեռքերս դողում են, նեղութիւն կրեցէք զգուշութեամբ դուրս պոկել այս եղեռնացին փաստը:

Գրչահատի ծայրով դործակալն առանց զժուարութեան քակեց լուսամտից ալիւրի շաղախով ամրացրած թուղթը:

—Այժմ ասա՛ ինձ, Նազար-բիձա՛, ո՞ր տեղից է այս թուղթը կպել ձեր պատուհանին, հարցրեց Սիսակը:

—Երեցփոխը ոչինչ բացատրութիւն չը կարողացաւ տալ. իսկ նորա կինը պարզն ասաց, որ ոչ միայն այդ մի թերթը, դորա նման շատերը միասին ինքն ստացել է Տաճատ վարժապետի կողջից, որոնցից մի քանիսով թղթած ունի միւս սենեկի ապակի չունեցող պատուհանները, միւս աւելորդները դեռ թափուած են իւրեանց տան խորշումը:

Եւ արդարեւ, տան տիկինը գոզը լցրած՝ ներկայացրեց բաւականին թղթի կոտրանք և ցոյց տուեց բոլոր պատուհանները:

—Ի՞նչ է այս, սիրելի Սիսա՛կ, այս ի՞նչ թղթեր են, բացատրի տեսնենք, ինչո՞ւ այդպէս վրդովուեցիր, զարմացմամբ հարցրեց վարդապետը:

—Ներեցեք, հայր տ՛ւրբ, որ ձեզ ոչ միայն անպատասխան եւ թողնելու, այլ և պէտք է ձանձրութիւն պատճառեմ ձեզ՝ անձամբ կատարել քննութիւնն՝ առանց ուրիշ գրադրի մասնակցութեան. հանգամանքները փոխուեցին, ինձ այլ ևս ձեզ պիտանի լինելն անպատեհ է. շտապում եմ ձեռնհաս միջոցից օգուտ քաղելու. իմ խընդիրս այս է, որ դուք փութացնէիք ձեր քննութիւնը, իմ գնալուց մի քանի րոպէ յետոյ գրէիք քննչին յետ թողուլ իւր գործը մինչև վաղը և դուք ձերը վերջացնէիք:

Դործակալի դրական պատասխանն առած՝ կապեց Սիսակն իւր թանկագին գիւտը թաշկինակի մէջ ու վազելով ընկաւ Բալասան աղայի բակը:

—Այս, սիէստչի աղա՛ց, հրէս մատաղն ինքն իր ոտովն ա եկել, ուրախ ուրախ զեկուցումն արաւ տանուտէր Խուղօն, սա ինքն ա մեր գեղի փիլիսոփիէն՝ պարոն Սիսակ Ֆամհարեանցը, որին էս սհաթը դու քո հրամանքդ ցանկանում էիր ծանօթանալ:

Տանուտէրի խօսքերը միանգամայն անուշադիր մնացին Սիսակի կողմից. հաստատ կարելի է ասել, թէ նա չը լսեց անգամ իւր հաշուին արած կծու երգիծաբանութիւնները:

Առաջին անգամը նա շփոթուեց, երբ ամեն կողմից աչքերն իւր վերաց սեհոռուեցին. նա նման էր այս րոպէին որպի հոտով թա-

կարդի մէջ ընկած բազէի, որի վերաց յանկարծ դռները փակուեցին ու դուրս թռչելու անցք չը գտաւ:

Նա մի երկու քայլ յետ գնաց, իւր շուրջը նայեց և մնաց կանգնած մէջ տեղը:

— Նստեցէք, տեղ ցոյց տուեց քննիչը Սիսակին:

— Տէր քննի՛չ, մեքենաբար արտասանեց վերջինս և կրկին լոեց: Ուրիշ ի՞նչ պէտք է անէր, որ չը լոէր:

Նորա լեզուն չէր շարժուում, հեռոցը խեղբում էր նորա ձայնը կոկորդումը: Նա նմանում էր մի գորովագութ մօր, որ իւր սիրելի մանուկը խլած լինի աւագակի ճանգից նոյն րոպէին, երբ դաժան գաղանի սուրը վերջ պէտք է դնէր անմեղ գառնուկի կեանքին: Ի՞նչ գորովանօք նա կը սեղմէր իւր սիրելի զաւակին, ի՞նչ սրաթեւ արծուի արագութեամբ կը փախցնէր իւր անզին գանձը՝ իրան հետապնդող մարդասպանից ազատելու:

— Նստեցէք, կրկնեց իւր առաջարկութիւնը քննիչը Սիսակին:

— Ենորհակա'լ եմ, ասաց նա զգաստանալով և քաշուեց մի կողմը:

— Գո՞ւք էք պարոն Սիսակ Փամհարեանցը, քաղաքավարութեամբ հարց տուեց քննիչը:

— Այո՛:

— Մի քանի հարցմունքներ ունիմ ձեղ առաջարկելու, կարո՞ղ էք պատասխանել:

— Իրաւունք ունիք, այժմ հանդիստ եմ:

— Դուք մեղադրուում էք սպանութիւնը ծածկելով, անմեղին զբարտելով, իսկ մարդասպանին արդարութեան ձեռքից ազատելու ձգտումն անելու փաստերով:

— Ի՞նչ ապացոյցներ ունիք:

— Ձեր սեպհական ինքնաձեռագիր նամակը:

— Ես ոչինչ այդպիսի թղթեր չեմ գրել, իմ ձեռքս աշխարհին յացտնի է:

— Ի հարկէ և դուք կը ճանաչէք:

— Անշո՛ւշու:

— Առէ՛ք:

Երկու երեք լուսէաչափ Սիսակն աչքերը նամակի վրայից չէր

հեռացնում. բոլորի ուշադրութիւնը դէպի նա էր. ամենքը կարծում էին, թէ նա կը շփոթուի, բայց սխալուեցան։ Սիսակը ընշացքի տակին մի աննշան ժպիտ խաղացրեց և լուրջ դէմքով թուղթը յետ տուեց։

— Սպասում եմ պատասխանի, կարճ հարցրեց քննիչը։  
— Դուք ուղիղ էք։

— Ու բեմն ճանաչո՞ւմ էք ձեր յանցանքը։

— Պարոն քննի՛չ, արհամարհական նայուածքով իւր շուրջը դիտելուց յետոյ՝ բարձրաձայն շեշտելով խօսեց Սիսակը. ամեն բանի կը հաւատայի, բայց այս աստիճան խարդաւանք՝ թոյլ չէի տալ ինձ երևակացելու. այս նամակն իմ սեպհական գիրս է, բայց ոչ իմ ձեռքով դրած։

— Պարզ խօսեցէք։

— Աւելի ոչինչ չեմ կարող ասել, միայն թէ գիրն իմն է, գրողն ես չեմ. եթէ, միրաւի, այս գրութիւնն ապացուցուի և մարդասպանը, որին, իբր թէ, ես պաշտպանում եմ, խոստովանի իւր յանցանքը, կամ ուրիշ վկայութիւններով նա դատապարտուի, ապա օրէնքի հիմամբ իմ պատիճա յաւիտենական աքտորն է. սակայն կըրկին կարող եմ հաւատացնել ձեզ, որ ես այս նամակի մասին տեղեկութիւն չ'ունիմ։

— Իսկ ձեռքը խոստովանո՞ւմ էք, որ ձերն է։

— Ճի՛շդ և ամենաճի՛շդ։

— Ուրեմն դուք կամ հիւանդ էք, կամ սոռում էք։

— Հայելու պէս պարզ է ինձ համար գործը, գիտեմ էլ գրողը, բայց մարդը կատարելագործուած է արուեստի մէջ դպրոցական նըստարանից. կեցցէ՛ գիտութիւնը։

— Դուք ուրիշին էք կամենում մեղադրել։

— Երբէ՛ք, աւելորդ ևս է, փաստեր առ այժմ չը կան, իսկ կեղծած է այն աստիճան ճշդութեամբ, որ ես ինքս իմ խօսքերիս վերայ տարակուառում եմ։

— Մի դրական պատասխան. եմ պահանջում ձեզանից։

— Առ այժմ խօսքերս հակասական պէտք է լինին. գրողն ես չեմ, ձեռքն իմն է. այդ ձեզ համար, ի հարկ է, նշանակութիւն չունի. ես այժմէն շնորհաւորում եմ իմ ոսովների ժամանակաւոր յաղթու-

թիւնը, օրէնքով հիմա դուք իրաւունք ունիք ինձ բանտարկել, ևթէ կամենան իմ բարեկամներս, ես ընդդէմ չեմ՝ մինչև ծայրը մի տեղից գուցէ կ'երեկի:

— Կարո՞ղ էք երաշխաւոր ներկայացնել:

— Ո՞չ կարող եմ և ո՞չ կը ցանկաց որ և է մարդի անբաղդութեան պատճառ լինել. երաշխաւորողին փրկութիւն չը կաց, մենք զիւղով, հասարակութիւնով մեր գործը լաւ գիտենք, այս նատողներն ամենքն էլ շատ լաւ հասկանում են ասութիւննա:

— Նատ ի զուր էք կողմնակի բարուրանքներ բարդում, պարոն Սիսակ, մէջ խառնուեց Մելնիկովը, ևթէ կամենաք՝ ես երաշխաւոր կը լինեմ:

— Սխալուում էք, աղայ Բալասան, ա'լս, ներեցէք, Վաղիմիր Նեստորի՛չ, ձեր հաշիւների մէջ, դուք ձեր բարերար երաշխաւորութեամբը ոչինչ զգալի արդիւնք չէք դուրս տանիլ. մի բան մի՛ մոռանաք, որ ես Երասխն ու Ախուրեանն էլ չեմ տեսած, ուրեմն և տաճկական սահմանը չեմ անցած:

— Ձեր խօսքերն և՛ անհասկանալի են և՛ վիրաւորական:

— Առաջինը կարող եմ պարզաբանել, իսկ երկորդի համար ձեզ եմ թողնում մոռածել:

— Այո՛, պարո՞ն, ես Վանեցի չեմ, յաջողած կը լինէի անշոշտ, ևթէ հինգ տարի յառաջ զեռ Վանեցին չեկած՝ դեռ ինքս դպրոցի ստորին դասատան աշակերտ՝ ամառը հայրենի օդը մի երկու ամիս ծծելու ժամանակս՝ լսած լինէի մի մարդու, դործիք դառնալի նրան և վարժութիւններ անէի կեղծելու նրա մուրհակներն և ուրիշ թըղթերը: Այդ պարանին դուք քաջ ճանաչում էք, պարոն Մելնիկով, նա մի հաստափոր աղայի անուանակից է. դուք ինքդ շատ լաւ մարդ էք, բայց նա ողջ գաւառի ցեցերի մէջ ցեցապետն է, ծծել է ժողովրդի արիւնը և սարսափ է դարձել ամենքին:

— Խնդրեմ լրեցնել դրան, դարձաւ Բալասան աղէնդէպի քննիչը, դա պատիւ է շօշափում:

— Այո՛, գերազնիւ տէ՛ր, ձերին հետ մեր ալ պատիւը կը շօշափէ, գլուխը շարժեց դրագիր Վանեցին:

— Գրեցէք, աւելացրէք, պարոն քննի՛չ, շարունակեց Սիսակը, որ հս ասում եմ և պնդում, թէ իմ շեշտած ցեցապետը դող է,

աւազակ է, մատնիչ է, ազգի դաւաճան է, ժողովրդի արիւնարբուն է, այս բոլոր թշուառութեանց պատճառն է, այս խարդախ գործերի հեղինակն և մեղակիցն է, աւելացրէք, որ ես մերժում եմ ձեր ցոյց տուած նամակի ճշդութիւնը, որ ես փաստեր և հաստատ գրաւոր ապացոյցներ ունիմ, թէ ո՞ր խարդախի ձեռքով կեղծուած և ո՞ւմ թելադրութեամբ կատարուած են այս ամենը, և որպէս զի պարոն Մելնիկովը չը թոյլ տայ ծաղր առնել ինձ՝ առաջարկելով իւր անզօր երաշխաւորութիւնը և չը պարծենայ իւր տարած յաղթանակով, ահա այս կապոցը թող վերականգնէ ճշմարտութիւնը:

Սիսակը քակեց կապոցը և քննչի առաջին փուեց մի կոյտ ճըմ-  
լուած, ճիշտուած թղթեր:

Ամենքը լուս են, ամենքի հետաքրքրութիւնը աւելացել է, բոլորի աչքերը յառոււած են դէպի այդ թղթի կտորները:

Հանդիսատեսներից մի մարդ միայն կորցրեց իւր գլուխը:

Քննութեան բոլոր ժամանակն այս պարոնը շատ ուրախ տրամադրութեան մէջ էր. նա թէպէտ չէր խօսում, բայց տէր-Սուքիասի և Սենիկովի քամակին նատած՝ երբեմնապէս մէկի կամ միւսի ականջին քաշուելով և անվատահութեամբ ինչ որ խօսքեր էր փսխում:

Այժմ այս մարդու շփոթուեց և իրան կորցրեց:

—Նա չեմ թոյլ տար, կը բողոքեմ, դժոխք և սանդարամետք յօգնութիւն կը կոչեմ, յափշոտակութիւն, աւազակութիւն, կատաղիք գեհենին, տեղիցը կանգնած բացականչում էր մարդը ձեռքերն օդումը շարժելով և մէկ դրանը նայելով՝ մէկ քննչի մօտ ընկած թըղթերի կապոցին:

Յանկարծ երկու գործողութիւն միասին կատարուեցաւ. այսուեղ յարձակումն զործեց զլուխը կորցրած մարդն արկածալի վիճեթի վերայ, իսկ այնուեղ հեռատես Վասիլ Վասիլիչի բազմափորձ հմտութիւնը դրան անցքը արգելեց: Նորա մի հայեացքը բաւական եղաւ սարի արջ Մահմադին և զազախներին դուռը կողպել տալու և շարաբաստիկ Գնիժունու ձեռքից հետաքրքրութեան արժանի կապոցը լինելու:

Յուսահատ թշուաւականը դրագիր վանեցին էր:

Նոյն բոսէին ժամկութ տուն մտաւ և մինամակ տուեց ընսին,  
տէրտէրին էլ ասաց, որ գործակայ հայր-սուրբն եկել է և կօգուզէլ է:



— Դուք, տանուտէ՛ր և տէր հա՛յր, կարող էք գնալ հոգեսր իշխանութեան ներկայացուցչի հրամանները կատարելու, իսկ դուք՝ պարոն Սիսա՛կ, առ այժմ ազատ էք, վճռեց քննիչը:

— Իսկ ես կը խնդրէի, պատասխանեց Սիսակը, այս բոպէիս առանց ժամավաճառ լինելոյ՝ պարոն օգնականի ներկայութեամբ՝ փութալ և խուզարկել պատուելի Գնթունու տունը: Այս թղթերի մընացորդը հարկաւ դեռ շատ բաներ պէտք է պարզէ, եթէ կարելի է, ես ևս կը ցանկացի ձեզ հետ լինել:

— Բայց դուք ինձ չ'ասացիք, թէ այս ծրարը ձեր ձեռքն ի՞նչ-պէս անցկացաւ:

— Թող տիկին Գնթունին իւր բերանով պատմէ ձեզ եղելութիւնը:

Հասարակութեան պատուելիներն երկու խմբի բաժանուեցան. մինը տանուաէրի և տէր-Սութիասի հետ դիմեցին երեսփոխի տունը, միւսը՝ քննիչի, Վասիլ Վասիլիջի և Սիսակի հետ՝ տանուտէրի օգնականի առաջնորդութեամբ՝ մտան գրադիր Վանեցու կացարանը:

Բալասան աղէն և այտեղից մերժուեցաւ Սիսակի գեկուցման համաձայն:

Գործակալի քննութիւնը երկար չը տեսեց. տանուտէրի ժողոված տամներկու վկացքն անպիսի անձինքներից էին, որոնք առանց ձիգ ու բարակ մտածմունքների, արտաքին աչքերի հետ խղճմտանքն էլ փակեցին և մօտեցան խաչ ու աւետարանին:

Նրանք միաձայն հաստատեցին, որ Բարսեղի կինն երկրորդն է, որ Սօնան կնոջ հետ բերովի է, նորա առաջին ամուսնութիւնիցն է և ոչ Խուզոյի հարազատ քեռութ թուրը, ինչպէս որ աւագ երէց տէր-Սութիասի յայտարարութեան մէջ միւղագրուած էր:

Վկաներից մէկը միացն սկզբումը դուրսը խորհրդակցել և համաձայնուել էր բոլորի հետ, բայց երբ խաչ ու աւետարանը տեսաւ, ներքին ձաշնի խայթից դողաց:

Ալևնքն արդէն համբուրել էին սրբութիւնները և պնդերեսութեամբ սպասում դործակալի հարցմունքներին, իսկ այս մարդը դեռ տասոանում էր:

Սա հին երեցփոխ նաւօն էր:

— Նուար արա, պարոն նաւասա՛րդ, ես շտապում եմ, համբուրիր,  
որ գործ սկսենք, հրամայեց գործակալը:

— Աջիդ մեռնե՛մ, զժար ա, կրակին մօտ գնացողը կէրուի:

— Ոչ, որդի՛, ճշմարտութիւնը խոստովանելը յանցանք չէ, ինչ  
դիտես, այն ասա՛:

— Ճշմարիտ խօսողի տակին մի Արաբատանի ձի պտի՝ ոտներն  
օրդանգուումը (տաղանդակ), զարշին (մորտ) ձեռին, ծառայե՛մ, որ  
ասելիքն ասի ու ընչանք Խուղաֆրին կրնգի ու մին պոկ գայ:

— Ոչ, սիրելի՛ս, դու հին մարդ ես, այդ պատճառաւ քեզ հեշտ  
է թուում, հեռագիրը թռչունից էլ արագ է, կատակով պատախան  
տուեց գործակալը:

— Զուրն ընկնողն անձրեկից չի վախիլ, պարոն նաւօ՛, գեահիր  
(յետ հացող) ձին քարվան չի կարող կտրիլ. ասում է՝ մէկը գնաց մի  
աշխարհք, տեսաւ բոլորը կոյր են, ինքն էլ իր աչքերը պինդ կապեց,  
որ նրանցից չի զանազանուի, մէջ խառնուեց տէր-Սուքիասը:

— Բաս Գաբրիէլ հրեշտակի հրեղէն սո՞ւրը, տէրտէ՛ր:

— Տէրտէրը Գաբրիէլի ճանապարհը կը ծռի, պարոն նաւօ՛:

— Է՛հ, քո ասածը թող ըլի, հոգուց հանեց նաւօն ու այս  
խօսքերով մօտեցաւ բազմոցին:

— Ո՛վ սուրը խաչ ու աւետարան, մեռնե՛մ ձեր ոտքի տակին,  
սուտն ու զորդո ձեզ էլ շատ լաւ յայտնի ա, բայց ով որ առաջին  
անգամ էս սովորովթը մտցրեց մեր գեղը, չհասը հաս արեց, հասը  
չհասի փոխեց, դուք նրա պատիժը տա՛ք:

— Ագռաւի ձէնը, որ Ասուուած լսէր, Վարդավառին ձիւն կը  
գար, միմեանց մէջ փնթփնթացին տէրտէրն ու տանուտէրը:

— Ուրեմն, հայր-սո՛ւրը, աշխարհը խաղաղութիւնն ընկաւ, խէր ու  
շառը կոտրուեց, բարեկամն ուրախացաւ, թշնամին պատռուեց, մի  
մատը գիր տուր, պասինք էզուց, ինչը տանուտէր Խուղուն:

— Վաղը տէրունական տօն է, պսակ չի լինիլ, միւս օրն էլ պաս  
է, նոյնպէս անկարելի է, ես շտապում եմ մերձակայ գիւղը, երկու  
օր այնտեղ կը լինիմ, վերադարձին կը հրամանագրեմ, կարգադրեց  
գործակալն և ժողովը արձակեց:

(Կը շարունակվ)